

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԴԵԳԻԵԳԱԾՍ

دييجيكادو

Հրատարակութիւն Գահիրէի ՀԲԸՄ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳԻՐ
Մարուշ Երամեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ
Պերճ Թերզեան

ՍՐԲԱԳՐԻՉ
ՎԵՐԱՏՈՒԳԻՉ
Անայիս Ճիգմեճեան

ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ
ՁԵԽԱՌՐՈՒՄ
Շահէ Լուսարարեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Printing Press

Գահիրեի ՀԲԸՄ-ի
լուրերուն հետեւեցէք
www.agbuegypt.com
կայքէջով:

Ծանօթացէք «Հայաստան
եւ Հայերը Արաբական
Մամուլին մէջ. 1876-1923»
կայքէջի նիւթերուն
www.arminmedia.com
հասցէով:

Թիւ 81 Նոր Շրջան
ՇՆՈՒՄԲԵՐ 2016

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ	1
<i>Մ. Երամեան</i>	
ՈՒՇԱԳՐԱՒ ԵՒ ԿՐԿՆԱԿԻ ԸՆՈՐՀԱՆԴԵՍ ՄԸ	2
<i>ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան</i>	
ԱՌԱՋԻՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ	5
<i>Մ. Ե.</i>	
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	6
ՍԱՐՈՒԽԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԿՈԿԱՆԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԵՋ ...	7
<i>Հրանդ Զէշիճեան</i>	
ՆՈՐԱՓԹԻԹ ՏԱՂԱՆԴԻ ՄԸ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ	8
<i>«Տ»</i>	
ՕԳՆԵՆՔ ԱՐՑԱԽԻՆ	9
ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՅՍՕՐ	10
ԶՐՈՅՑ ԵՐԵՄՆԻ ՀԲԸՄ-Ի ԿԵՂՐՈՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՏՆՕՐԷՆՈՒՀԻՆ ԴԱԼԱՐ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ ՀԵՏ	12
<i>«Տ»</i>	
ՀԲԸՄ-Ի ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ	19
ՇԱՄ-ԷԼ-ՆԵՍԻՍԸ ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ ՄԵՋ	20
<i>Սօսի Ներքտեան Յակոբեան</i>	
ՃԱՏՐԱԿԻ ԱՍԱՈՆԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ ՄԸ ԿՈԿԱՆԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԵՋ ...	21
<i>ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան</i>	
ՇԱՀԵԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ	22
<i>Սօսի Ներքտեան Յակոբեան</i>	
ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՊԱՍՔԵԹ ՊՈԼԻ ՏԱՐԵԿԱՆ ՍՐՑԱՇԱՐՔԸ՝	24
<i>Սօսի Ներքտեան Յակոբեան</i>	
ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՔԵՐՄԵՍԸ	25
<i>ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան</i>	
ՍՐԲՈՒՀԻ ԹԵՐԵԶԱ ԱԿՈՒՄԲԸ ԿԸ ՊԱՏՈՒԷ ՀՀՀ-ՀԲԸՄ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ Ա. ՇՐՋԱՆԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐԸ	26
<i>ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան</i>	
ՄԱՀ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԻՒՆ ԷԼՍԻ ՊԷՅԼԵՐԵԱՆԻ	27
<i>«Տ»</i>	
ՄԱՀ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՍ ԹՐԱՅԵԱՆԻ	28
<i>«Տ»</i>	



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Եգիպտահայ գաղութը, հակառակ շատ հարուստ պատմության, իր գործունեությամբ ընդհանրապես քիչ ծանօթ համայնք է. թեև պետք է մոռնալ անշուշտ որ այս «քիչ ծանօթ» իրավիճակը արդիվ է Սփիւռքի տարբեր շրջաններուն միջեւ հաղորդակցության պակասին:

Անոնք որոնք ծանօթ են այս համայնքի պատմության, կ'ափսոսան անոր անցեալի փառքը, որ այսօր յիշատակ իսկ չէ, որովհետև նոր սերունդը ծանօթ չէ անոր:

Սակայն Գահիրէի, Յելիոպոլսոյ թէ Աղեքսանդրիոյ հայկական կառոյցները՝ եկեղեցի, դպրոց, մատուռ թէ գերեզմանատուն, ինչպէս եւ ակումբներ, այսօր կանգուն են տակաւին իրենց ամբողջ շքեղութեամբ:

Այդ կառոյցներուն այցելուն կրնայ միայն հիանալ անոնց ետին կեցող ապրելու, հայօրէն ապրելու կամքին առջեւ, որ լարած է եգիպտահայոց նախնիները եւ մղած նման իրագործումի:

Սակայն համայնք մը միայն ու մանաւանդ կառոյց չէ, այլ հաւաքականութիւն, որուն մէջ կ'ամփոփուին ժողովուրդին կենսահայեացքն ու ձգտումները: Այս առումով իրապէ՛ս յարգելի է եգիպտահայ համայնքը իր ունեցած անսպառ եռանդին համար, որ խոտոր համեմատութեան մէջ է իր անդամներու թիւին հետ:

Ինչպէս բոլոր գաղութները, Գահիրէն եւս ունի իր եկեղեցին, այնքան հայկական ու շքեղ Սբ. Գրիգոր Լուսաւորիչը, եւ դպրոցը՝ Գալուստեան-Նուպարեան Ազգ. Վարժարանը (Յելիոպոլիս), որ միացումն է երկու դպրոցներու՝ Գահիրէի Գալուստեանին եւ Յելիոպոլսոյ Նուպարեանին: Առաջինը չորս տարիներ առաջ փակած է իր դռները կարգ մը գործնական պատճառներով եւ անշուշտ Գահիրէի աշակերտութեան թիւի նուազումին համար:

Եգիպտոսի մէջ կը շարունակեն լոյս տեսնել եգիպտահայ մամուլին աւանդական անունները՝ «Արեւ», «Յուսաբեր», «Ջահակիր» եւ ԶԲԸՄի «Տեղեկատու» եռամսեան:

Հայ տիկիները Գահիրէի մէջ ունին քանի մը միութիւններ, ինչպէս Եկեղեցւոյ Տիկ-

նանց խնամակալութիւն, Բարեսիրաց Միութիւն, Այծեմսիկ Տիկնանց Միութիւն, որոնք բոլորն ալ ջանասիրաբար կը հոգան համայնքի կարիքները: Ասոնց կողքին կայ նաեւ Հայ Կարիքի Խաչը, որ իր բարեսիրական գործունեութեան առընթեր կը տանի մշակութային գործունեութիւն մը, որ կը ձգտի հայկական տոհմիկ ժառանգութիւնը պահպանել եւ ծանօթացնել:

Տակաւին՝ եգիպտահայերը հպարտ տներն են «Արաքս» եւ «Ծիածան» երգչախումբերուն (առաջինը մեծերու, երկրորդը մանկական), «Չանգեզուր» պարախումբին, հայկական մարզական չորս ակումբներու եւ ՍԷՆ Թերեզ Հայ Կաթողիկէ Ժողովրդապետական ակումբին, իրենց պասքէթպոլի տղոց եւ աղջկանց տաարբեր տարիքի խումբերով:

Ամեն տարի հինգ ակումբներ կը կազմակերպեն պասքէթպոլի իրենց մրցաշարքերը, որոնք համայնքի երիտասարդութեան առօրեային կիզակետը կը դառնան: Այս մրցաշարքերէն երկուքը տեղի կ'ունենան Աղեքսանդրիոյ մէջ, որոնց համար խումբերը կը ճամբորդեն Աղեքսանդրիա, խանդավառ մթնոլորտ ստեղծելով նաեւ այդ քաղաքի հայութեան համար:

Այս բոլորը կ'ընթանան հայկական հինգ ակումբներու հաճելի տարածքներուն վրայ, նոյնքան հաճելի մթնոլորտի մէջ:

Տակաւին պետք է խօսիլ տարբեր ձեռնարկներու մասին, որոնք տեղի կ'ունենան տարբեր առիթներով, տարբեր վայրերու մէջ, եւ որոնց կը մասնակցի ամբողջ համայնքը, անկախ անդամներու պատկանելիութենէն:

Սակայն ամենէն ծանրակշիռ աշխատանքը որ եգիպտահայ համայնքը իրագործած է վերջին շրջանին եւ կը շարունակէ ապագայի յստակ ծրագիրներով, Ջարդին առնչուած արաբերէն գիրքերու հրատարակութիւնն է, գիրքեր, որոնք կ'ամթարգմանաբար կը ներկայացուին, ինչպէս Դոկտ. Ռէյմոն Գեորգեանի հսկայածաւալ «Հայկական Ցեղասպանութիւնը» ֆրանսերէն գիրքին արաբերէնի թարգմանութիւնը, կամ արաբերէն բնագրերով կարելոր հաւ-



ՀԲԸՄ-Ի ՆԱԽԱԳ-ԱՀ ՊԵՐՃ ՍԵԳՐԱԿԵԱՆ ԿՐԹԱՆԱՆԱՅ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԱՍՊԵՏԻ ՏԻՏՂՈՍԻՆ



Հոկտեմբեր 29, 2016-ին Ն.Ս.Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նիւ Եորքի մէջ ներկայ եղաւ ՀԲԸՄիութեան 89րդ ընդհանուր ժողովին եւ Միութեան 110-ամեակին նուիրուած ձեռնարկներուն: Այդ ժողովի ընթացքին Վեհափառ Հայրապետը իր օրհնութիւնն ու պատգամը տուաւ ՀԲԸՄիութեան անդամներուն:

«Ուրախութիւն է Հայոց Հայրապետիս համար վերստին գնահատանքի խօսքով անդրադառնալ ՀԲԸՄ-ի աւելի քան մէկդարեայ գործունեութեան, որ բարեզարդուած է ազգաշահ ու եկեղեցանուէր արգասալի իրագործումներով»:

Այս առիթով Նորին Սրբութիւնը «Ասպետ Ս. Էջմիածնի» տիտղոս եւ հայրապետական շքանշան շնորհեց ՀԲԸՄ-ի նախագահ Տիար Պերճ Սեդրակեանին, ազգին մատուցած աստուածահաճոյ ծառայութիւններուն եւ Ս. Էջմիածնի պայծառութեան բերած բացառիկ աւանդին համար:

Ծե. ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ Տիար Օննիկ Պըլըքտեան եւ Գահիրէի ՀԲԸՄ-ի ատենապետ Տոքթ. Վիգէն Ճիգմէճեան զոյգ շնորհաւորագրեր յղեցին Միութեանս նախագահին:

Նոյն առիթով Շրջանակային Յանձնաժողովի եւ Գահիրէի ՀԲԸՄի պատուոյ ատենապետ Տիար Պերճ Թերզեան, հեռաձայնային կապ պահելով Միութեան նախագահին հետ, անձնապէս շնորհաւորեց զինք:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 25-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ ՀՀ ԳԱՀԻՐԷԻ ԳԵՍՊԱՆԱՏԱՆ ՄԷՋ

Սեպտեմբեր 22-ին ՀՀ Եգիպտոսի դեսպանատան մեջ Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամեակին նուիրում պաշտօնական ընդունելություն մղ տեղի ունեցավ:

Ներկայ էին ԵԱՀ տարածքային զարգացման նախարար Աիմես Չաքի Պատր, ԱԳ նախարարի տեղակալ Իհապ Նասր, խորհրդարանի անդամներ, տարբեր նախարարություններու եւ գերատեսչություններու բարձրաստիճան պաշտօնեաներ, Եգիպտոսի դիւանագիտական մարզի ներկայացուցիչներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ, գործարարներ, լրագրողներ եւ եգիպտահայ համայնքի անդամներ:

Ողջոյնի իր խօսքին մեջ դեսպան Արմեն Մելքոնեան ներկայացուց անկախության 25 տարիներու ընթացքին Հայաստանի Հանրապետության անցած ուղին, նուաճումներն ու ներկայի մարտահրաւերները:

ՀՀ դեսպանը նշեց որ հայ-եգիպտական յարաբերությունները միշտ բարձր մակարդակի վրայ եղած են, իրենց հիմքին մեջ ունենալով երկու բարեկամ ժողովուրդները միացնող պատմամշակութային ընդհանրություններն ու ավանդությունները:

Արմեն Մելքոնեան համոզում յայտնեց որ երկու երկիրներուն միջեւ գործակցությունը ընդլայնելու եւ խորացնելու համար բոլոր տուեալները առկայ են:

Նախօրէին՝ 21 Սեպտեմբերին ՀՀ դեսպանատունայցելութիւն տուած էր երկրի նախագահին անձնական ներկայացուցիչ Ապտէլ Ազիզ Էլ Շերիֆ, որ Հայաստանի Հանրապետության անկախության տօնին առիթով, դեսպան Արմեն Մելքոնեանին փոխանցած էր երկրի ղեկավարին ջերմ շնորհաւորանքներն ու բարեմաղթությունները, ուղղուած Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսեանին եւ բարեկամ հայ ժողովուրդին:

շար.էջ 1-էս

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

աքածոներ, ինչպէս «Հայաստան եւ Հայերը Արաբական Մամուլին Մէջ» գիրքին Ա. Հատորը, որ շարունակաբար լոյս պիտի տեսնէ, մինչեւ արխիւային նիւթերուն սպառումը:

Այս բոլորին ետին կը կենայ քուլիսային հսկայ աշխատանք մը, որ արդիւնք է հասարակութեան հետ կապերու (public relations), զորս դիւանագիտական հմտութեամբ կը վարեն գաղութի պատասխանատու անձերը, անկախ իրենց պատկանելիութենէն:

Պէտք է խոստովանիլ սակայն որ համայնքին համար ամենէն հիմնական եւ կարեւոր ներդրումները կու գան Ազգային Առաջնորդարանէն եւ ՀԲԸՄիութենէն, մեծագումար յատկացումներով, կրթական եւ առողջապահական մարզերէն ներս: Գաղութի պատասխանատուները կը փորձեն Հայաստանի հետ համայնքին սերտ կապերը պահպանել, տարբեր միջոցառումներու, գեղարուեստական ելոյթներու թէ մարզա-

խաղերու մասնակցելու եւ վերապատրաստութեան համար խումբեր ուղարկելով: Տակաւին կան Գահիրէի Համալսարանի Գրականութեան ֆակուլտետի ծիրին մէջ գործող Հայագիտական Ուսումնասիրություններու Կեդրոնը, որուն գոյութեան մէջ Հայաստանի Դեսպանութիւնը մեծ դեր ունեցած է եւ կը շարունակէ ունենալ - իսկ Ազգային Առաջնորդարանն ու ՀԲԸՄը նիւթապէս կը սատարեն անոր գործունեութեան - ինչպէս նաեւ եգիպտական պետական ռատիոկայանի հայկական յայտագիրը, օրական մէկ ժամի դրութեամբ:

Այս քանի մը տողերը կը գրուին այստեղ արժանի գնահատանքը տալու շատ ծանօթ եւ խորարմատ համայնքի մը մերօրեայ եռանդուն գործունեութեան, յուսալով որ Հայաստանի թէ Սփիւռքի մէջ հետաքրքրութիւնը կ'աւելնայ անոր հանդէպ:

Մ. Երամեան



**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ
ՀԱՐՄԻ ԳԱՀԻՐԷԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԵՐԿԱՐԱՄԵԱՅ ԱՆԴԱՄ
ՏԻԱՐ ՄԱՐՏԻԿ ՊԱԼԱՆԵԱՆԻ ՀԵՏ**

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Անձնական Տուեալներ

Ծնած է 1950-ին, Գահիրեի Շուպրա թաղամասը, ապա ընտանիքին հետ փոխադրուած է Զելիոպոլիս:

Յաճախած է Նուպարեան Ազգային Վարժարան, որ այդ շրջանին մինչեւ նախակրթարանի վեցերորդ կարգը ունէր միայն, հետեւաբար պատրաստական ու երկրորդական ուսումը առած է անգլիական English Mission վարժարանէն ներս, որուն ընթացքը ավարտելէ ետք, Գահիրեի համալսարանի ուսումնառութեան տարիներուն (1969-1974), աշխատած է որպէս նախակրթարանի թուաբանութեան եւ գիտութեան դասատու, իր վարժարանին՝ Նուպարեանի մէջ:

Ուսանած է Գահիրեի Զամալսարանը եւ գերազանց գնահատականովու պատուոյ շքանշանով ավարտած էքիմիական ճարտարագիտութեան ճիւղը (chemical engineering):

Վկայուելէ ետք երկու տարի աշխատած, ապա Ամերիկեան համալսարանէն ստացած է MBA (master of business administration) կոչումը, միջազգային շուկայավարութիւն (international marketing) մասնագիտութեամբ:

Գործի ասպարէզ մտած է ամերիկեան ընկերութեան մը մէջ աշխատելով, ապա 1984-ին ունեցած է իր ընկերութիւնը, որ, ժամանակի ընթացքին ծաւալած եւ բարգաւաճած, մինչեւ օրս կը շարունակուի:

Մարզական Կեանք

1962-1972 եղած է Զայկական Ընթերցասրահի փինկ-փոնկի խումբի անդամ եւ քանիցս ախոյեան հանդիսացած եգիպտահայութեան փինկ-փոնկի անհատական մրցաշարքերուն: Մաս կազմած է ԶՍԸՄ ՆՈՒՊԱՐ ակումբի ֆութպոլի կրտսերներու խումբին, նաեւ եղած է գայլիկ եւ սկաուտ:

Հասարակական Գործունեութիւն

Տիար Պալաեանի հասարակական գործունեութիւնը «ժառանգաբար» իրեն անցած, երեք բեւեռներ ունեցած է եւ կը շարունակէ ունենալ:



Կանուխեն մասնակցած է Գահիրէի հայկական կեանքին գործօն ներկայութեամբ, ըլլալով ոչ միայն հայկական վարժարանի ուսուցիչ, հոգաբարձու (1978-1986), ապա նաեւ տնօրէն (1988-1992): Իսկ վերջերս մաս կը կազմէր Գալուստեան-Նուպարեան վարժարանէն ներս հայերէն լեզուի բարելաւման-յանձնախումբին:

1978-ին անդամակցած է Գահիրէի ԶԲԸՄիութեան, 1981-ին դարձած է վարչութեան անդամ (խորհրդական) մինչեւ 1989, 1990-1994 վարած է գանձապահի պաշտօն, իսկ 1995-էն մինչեւ այսօր նոյն միութեան ատենադպիրն է:

Տիար Պալաեանի հայրն ու մեծ հայրն ալ եղած են ԶԲԸՄիութեան վարչական անդամներ: Միութեան տոմարները կը հաստատեն թէ մեծ հայրը՝ Մարտիրոս Պալաեան 1927-1928 թուականներուն եղած է ԶԲԸՄ-ի ատենապետ:

1992-ին մասնակցած է Եգիպտոսի մէջ Զայաստանի Դեսպանատան հիմնադրութեան աշխատանքներուն, իսկ 1993-1996 եղած է դեսպանատան մշակութային եւ տնտեսական խորհրդատու:

1981-էն ի վեր անդամ է Գահիրէի Թեմական Ժողովին, անոր քսանչորս անդամներէն մէկն է, իսկ ներկայիս անդամ է նաեւ Զաղաքական Ժողովին:

1998-էն ատենապետն է «Յայկական Ընթերցասրահ»ին (հիմնուած 1902-ին), որ եղած է եւ կը շարունակէ ըլլալ Ս. Դ. Յնչակեան կուսակցութեան Գահիրէի կեդրոնատեղին:

Յետեւեալ հարցազրոյցը փորձ մըն է ծանօթանալու Պր. Մարտիկ Պալաեանի մտածելակերպին եւ տեսակետներուն: Ուշադիր ընթերցողը պիտի նկատէ, որ այնտեղ համայնքը յուզող գրեթէ բոլոր հարցերուն անդրադարձ կայ:

Չրուցող - Նկատի առնելով որ շատ համեստ մարդ էք եւ ընդհանրապէս չէք սիրեր դուք ձեր մասին խօսիլ, այս հարցազրոյցով պիտի փորձենք քիչ մը արելի մանրամասն տեղեկութիւններ փոխանցել մեր ընթերցողին, ձեր կեանքին, աշխատանքներուն եւ կենսահայեացքին մասին:

Լսած ենք որ գեղեցիկ «պատմութիւն» մը կայ կապուած ձեր անուան եւ դեսպանատան սկիզբի շրջանի տնտեսական դժուարութիւններուն հետ. կ'ուզէի՞ք այդ մասին խօսիլ:

Մարտիկ Պալաեան - Օ՛, ոչ, բնաւ. այդ պատմութեան ժամանակը շատոնց անցած է արդէն եւ մոռցուած:

Չրուցող - Չեմ կարծեր որ մոռցուած ըլլայ. անոնքորոնք գիտեն, արդէն գիտեն եւ կը գնահատեն. իսկանոնց համար, որոնք չեն գիտեր, չէի՞ք ուզեր անդրադառնալ:

ՄՊ - Ո՛չ ոչ ...

Չրուցող - Այսպիսով կը հաստատէք ձեր

համեստութիւնը: Ուրեմն անցնինք:

ՄՊ - Պարզապէս կ'ուզեմ ըսել՝ այդ աշխատանքը առիթ տուաւ որ իմ լումաս դնեմ Զայաստանի պետականութեան կառուցումին մէջ, ինչպէս եւ առիթ դարձաւ որ Զայաստանի ղեկավարներուն հանդիպիմ, Զայաստան ճամբորդեմ եգիպտական պատուիրակութիւններու հետ, եւ այլն. տարբեր ասպարէզ մըն էր:

Չրուցող - Կարդալով ձեր կենսագրութիւնը, կը նկատենք ձեր հասարակական բազմաբնոյթ եւ լայնածիր գործունեութիւնը. դուք ձեզ ո՞ր արելի դրսեւորուած կը զգաք, ո՞ր ասպարէզին մէջ է որ ձեր ամբողջ կարելիութիւնը կրնաք դնել:

ՄՊ - Բոլորն ալ նոյն նպատակին կը ծառայեն, բայց տարբեր ուղիներով: Կը կարծեմ որ մէկը միւսին չի խաչաձեւեր, այսինքն օրինակ որպէս Յնչակեան կուսակցութեան անդամ ընդունուած եմ ԶԲԸՄիութեան վարչութեան մէջ, որովհետեւ այստեղի Բարե-



գործականը (ինչպես ընդունուած է հակիրճ ձեւով ըսել) կը շանայ բոլոր կողմերէն ներկայացուցիչներ ունենալ, որպէս համագաղութային միութիւն: Մէկը միւսին չի խաչածէր: Կրթականը փորձառութիւն փոխանցելու շրջան մըն էր. բայց համայնքային աւելի մեծ ասպարէզ որպէս կը նկատեմ Թեմականի եւ Բարեգործականի անդամ ըլլալս, աւելի լայն ծաւալի վրայ կրնամ գաղափարներս առաջ տանիլ կամ փոխանցել:

Չրուցող - Այլ խօսքով՝ ի՞նչ ալ ըլլայ ձեր աշխատանքը, ձեր վերջին նպատակը ժողովուրդին եւ համայնքին ծառայելն է:

ՄԳ - Անշո՛ւշտ: «Ձահակիր»ի պատասխանատու եղած եմ 1998-էն: Սկիզբը 1963-ին հորեղբայրս՝ Սարգիս Պալաեանը եղած է արտօնատեր-խմբագիրը: Յետոյ երկրորդ հորեղբայրս՝ Չաւեն Պալաեանը, ապա Աւետիս Մովսէսեանը:

Չրուցող - Երկար տարիներ հասարակական ձեր գործունեութեամբ, տարբեր մարզերու մէջ ծառայած էք համայնքին. ո՞ր մարզէն ներս է որ համայնքը ամենամեծ կարիքը ունի, ուր պէտք է շատ աշխատանք տանիլ:

ՄԳ - Ազգային Իշխանութեան մէջ:

Չրուցող - Ի՞նչ առումով:

ՄԳ - Հայապահպանումի առումով: Պէտք է ջանքերը զօրացնել:

Չրուցող - Ուրեմն դուք հայապահպանումի մարզէն ներսհարցեր կը տեսնէք: Ի՞նչ հարցեր են ատոնք, կրնա՞ք մանրամասնել:

ՄԳ - Առաջնահերթը դպրոցին կացութիւնն է. բարելաւել հայերէնին եւ անոր կապուած նիւթերուն դասաւանդումը, հայեցի կրթութիւնը, ստեղծել այնպիսի միջավայր որ հայը հայ մնայ, որովհետեւ դպրոցը, ընտանիքէն ետք, հայօրէն ապրելու միակ շրջանն է, մինչեւ աւարտականի հասնիլը, որմէ ետք իւրաքանչիւր աշակերտ ընկերային մեծ միջավայր մը պիտի ունենայ (համալսարան թէ աշխատանք) եւ երկրին (Եգիպտոսի) ինիսուն միլիոնին մէջ պիտի լուծուի: Հետեւաբար դպրոցին մէջ ստեղծենք այնպիսի հայկական մթնոլորտ, մտածելակերպով, բարքերով եւ մշակոյթով, որ աշակերտները պատուաստուած ըլլան օտարանալու դէմ:

Չրուցող - Հետաքրքրական բան մը ըսիք՝ դպրոցը ընտանիքէն ԵՏԶ. կը նշանակէ թէ

համոզուած էք որ ընտանի՞քն է առաջին վայրը, ուր երեխան պէտք է զգայ հայկական շունչը: Սակայն ես, որպէս մէկ նոր անդամը այս համայնքին, դուրսէն դիտելով կը տեսնեմ թէ բոլոր ընտանիքներուն մէջ չէ որ հայկական շունչ կայ. կը կարծեմ որ, որոշ չափով, դպրոցին դիմագրաւած դժուարութիւնները այս կացութենէն կը բխին: Համաձայն էք:

ՄԳ - Համաձայն եմ, որովհետեւ այսօրուան ծնողքը նախապէս աշակերտներ էին դպրոցէն ներս, եւ իրենց դպրոցական շրջանին չունեցան ա՛յդ պատրաստութիւնը. երբ դպրոցը ձգեցին եւ ընտանիք կազմեցին, այդ հայկական շունչը չունէին իրենց մէջ. անկեղծօրէն խօսելով ըսեմ որ ութսունական թուականներուն կամ աւելի առաջ, մշակութային միութիւնները իրենց շատ մեծ դերը ունէին հայ մշակոյթը պատանիներուն եւ երիտասարդներուն փոխանցելու մէջ: Չանազան պատճառներով այդ դերը գրեթէ դադրած է կամ շատ տկարացած: Իմ առաջարկս այն է որ գոնէ՛ դպրոցը լրացնէ այդ պակասը: Մշակութային քանի մը միութիւններու մէջ երգ եւ պար կայ, բայց նաեւ ասմունք, թատրոն եւ դասախօսութիւններ պէտք են, որոնք հայ ըլլալու հպարտութիւն ներշնչեն պատանիներուն: Մշակութային միութիւններու դերի նուազումին հետ, դպրոցին դերն է որ պէտք է աւելնայ այս առումով:

Չրուցող - Բայց չէ՞ք կարծեր որ խառն ամուսնութիւններէ եկած տղաքը ...

ՄԳ - Խառն ամուսնութի՞ւն ... անշուշտ անոնց պատճառներն ալ պէտք է նայինք ... Այս բոլորին լուծումը միայն Ազգային Իշխանութեան ձեռքն է ... բարձրագոյն կառոյցը համայնքին: Մենք որպէս անոր անդամները, պիտի փոխուինք, բայց կառոյցը պիտի մնայ: Ազգային Իշխանութիւնը հեռատեսութեամբ պէտք է ծրագիրներ մշակէ, կարելիին չափ այդ խառն ամուսնութիւններուն առաջըը առնելու համար:

Չրուցող - Այստեղ այլ հարց կը ծագի՝ ինչ որ տեսայ, այդ կառոյցին կամ նման կառոյցներու մէջ ծառայողները, քիչ բացառութեամբ, միջին տարիքի մարդիկ են: Թեմական Ժողովը շատ պատասխանատու կառոյց է, եւ անոր մաս կազմողները պէտք է որոշ



պատրաստուածութիւն ունենան: Ո՞ր տեղի կ'ունենայ պատրաստութիւնը ա՛յն երիտասարդներուն, որոնք ապագային, մօտիկ ապագային մաս պիտի կազմեն այդ ժողովին: Օրինակ դուք, ոչ միայն կու գաք ազգային աշխատանքի վարժ ընտանիքէ մը, այլ նաեւ դուք աշխատանք տարած էք հասնելէ առաջ Թեմական ժողովի անդամ ըլլալու՝ ուսուցիչ, տնօրէն, ակումբի պատասխանատու, խմբագիր, մարզիկ եւ այլն: Հիմա նման աշխատանք կը տարուի՞:

ՄՊ - Դժբախտաբար՝ ոչ:

Զրուցող - Չէ՞ք կարծեր որ ասիկա կարելոր հարց մըն է, որուն մասին պէտք է մտածէ Ազգային Իշխանութիւնը՝ մարդուժ պատրաստել գալիքին համար:

ՄՊ - Հարկա՛ւատիկա կը սկսի հայապահպանումէն, դպրոցէն. մէկը որ հայկական դպրոց չէ գացած, մէկը որ հայերէն գրել չի գիտեր, կը կասկածիմ թէ ինչպէ՛ս պիտի կարենայ պատասխանատու որոշումներ առնել համայնքին համար: Անշուշտ շատ յարգելի բացառութիւններ կան, օրինակ կ'ըսուի թէ Պօղոս Նուպար Փաշան հայերէն խօսիլ չէր գիտեր, բայց մարդը բացառիկ ոգի ուներ, կամ շուրջը այնպիսի մարդիկ կային, որոնք համոզած էին զինք: Բայց այդ երեւոյթը պէտք չէ օրինաչափ ըլլայ:

Զրուցող - Ըստ ձեզի, ո՞ր պէտք է պատրաստուին ապագային պատասխանատու պատօններ վերցնող անձերը:

ՄՊ - Միութիւններու մէջ անշուշտ:

Զրուցող - Բայց միութիւններու մէջ այդ աշխատանքը, որքան գիտեմ, չի տարուիր: Ո՞վ պէտք է սկսի ի վերջոյ:

ՄՊ - Թեմական ժողովի անդամները, թէեւ ընտրութեամբ կ'որոշուին, սակայն իւրաքանչիւր միութիւն կը ներկայացնէի՛ր թեկնածուները, որոնք արդէն կ'ընտրուին: Հետեւաբար նման ազգային ծառայութեան համար անձերը պէտք է միութիւններէն անցնին:

Զրուցող - Այլ խօսքով՝ միութիւնները (կամ կուսակցութիւնները) իրենք պէտք է մտածեն ապագայի իրենց աշխատողները պատրաստել, չէ՞. բայց այդ աշխատանքը կա՞յ: Ճշգրտօրէն կազմակերպուած միակ աշխատանքը կարծես պասքէթպօլի խաղերն են՝ հետեւողական, կազմակերպուած,

կանոնաւոր, տղաքն ալ յանձնառութեամբ կը հետեւին, եւ այլն: Կը մտածեմ՝ եթէ այստեղ ալ դասընթացքներ կազմակերպուին առաջնորդներ, ազգային գործին մէջ աշխատողներ պատրաստելու համար, մարդիկ որոնք կարենան ամբողջ հաւաքականութիւն մը առաջնորդել ... որովհետեւ ա՛յս ժամանակներուն նման աշխատանք սիրողաբար չ'ըլլար, մասնագետներ են պէտք ... Ի՞նչ է ձեր կարծիքը:

ՄՊ - Նման դասընթացքներ կամ վարժութիւններ, տարիներու ընթացքին բոլոր միութիւնները փորձած են, իրենց վարչութիւններու վերակազմութեան մէջ միշտ երիտասարդ ուժեր ներառնելով, օրինակ վարչական կազմին եօթը կամ ինը անդամներէն երկուքը կամ երեքը երիտասարդներ եթէ ըլլան, ժողովներուն մաս կազմելը անոնց համար կրնայ փորձառական շրջան մը, դասընթացք մը ըլլալ, մանաւանդ պատասխանատուութիւն կրելու. ասոր գործադրութիւնը սակայն դիւրին չէ, մասնաւորաբար հիմա, երբ մեծ տարբերութիւն կայ սերունդներուն միջեւ, առօրեայիթէ մտածելակերպի: Սակայն ներկայերիտասարդները երեցներէն սորվելու փափաք չունին: Նախապէս փափաքը կար, միջոցը չկար, հիմա փափաքը չկայ: Նախապէս սերունդ մը քսան տարուան տարբերութիւն կ'ենթադրէր, հիմա ամէն հինգ տարին նոր սերունդ է ... տարբերութիւնը մեծ է, կարճ ժամանակի մէջ: Քսան տարուան մէջ չորս տարբեր սերունդ կ'ունենանք. մենք չորս սերունդ ետ մնացած կը համարուինք:

Զրուցող - Նկատի առնելով որ դուք Նուպարեան վարժարանին մէջ եղած էք ե՛ւ աշակերտ, ե՛ւ ուսուցիչ, ե՛ւ տնօրէն, ի՞նչ է տարբերութիւնը այն օրերուն եւ այսօրուան աշակերտութեան, որակի առումով:

ՄՊ - Աշակերտը կաւի պէս է. կարելորը անոնք են, որ կաւին ձեւ կու տան. ծնողները սակայն, դժբախտաբար, ժխտական դեր կը խաղան, բան մը որ նախկին սերունդներու պարագային չկար:

Զրուցող - Ե՞րբ ստեղծուած է ծնողներուն այդ դերը եւ ի՞նչ է անոր պատճառը:

ՄՊ - Մտածելակերպի տարբերութիւնն է. նախապէս ծնողքը հպարտ էր իր հայութեամբ, հպարտ էր իր դպրոցով եւ կ'ուզէր զաւ-



ակը յանձնել մեկու մը, որուն կը վստահեր: Այսօրուան ծնողները ոչ միայն դպրոց, այլ եւ համալսարան աւարտած են, սակայն կեանքի նիւթական-տնտեսական ճնշումները կը ստիպեն, որ դպրոցը դիտեն որպէս կեանքի ասպարեզ մտնելու միջոց. այսինքն զաւակները դպրոց կը դրկեն, որպէսզի անոնց ապագան, ձեւով մը «ապահովեն»: Այդ ուղղութեամբ չեն կրնար հայապահպանումի եւայլնի մասին մտածել. միայնանգլերէն լեզուները: Մեր ծնողները այդպէս չէին: Մեր դպրոցէն ներս ծնողներուն միջամտութիւնը աւելցած է այնքան, որ նուազած է տնօրէնութեան ազդեցութիւնը: Դժբախտաբար մեր համայնքին 30 % -ը օտար վարժարան կը դրկէ իր զաւակը, գրեթէ քսան տարի է: Զիմա սակայնարդէն սկսած եմ օտար դպրոցներ յաճախողներու ծնողներէն դժգոհութիւններ լսել. դժգոհանքը կա՛յ, սակայն հոն, օտար վարժարանին կամ տնօրէնութեան աշխատանքներուն չեն կրնար միջամտել:

Զրուցող - Կարելի՞ է ասիկա դարմանել:

ՄԳ - Միասնական ուժ պէտք է: Դեկավարները բոլորը պէտք է համաձայնին որ միջամտութիւնը արգիւրած ըլլայ, առանց բացառութիւններու: Ըլլայ օրէնք, որուն առջեւ բոլորը հաւասար ըլլան:

Զրուցող - Անդրադառնալով «Ձահակիր»ին, կրնա՞ք ըսել թէ ինչպէ՞ս հասած էք թերթին պատասխանատու խմբագիրը ըլլալու հանգրուանին:

ՄԳ - Յաճախ կ'այցելէի Ընթերցասրահ եւ կը հետեւէի աշխատանքներուն: Երբ խմբագիրը՝ Չաւեն Պալաեան մեկնեցաւ քաղաքէն, ես գործակցեցայ նախկին խմբագիր Աւետիս Մովսէսեանի հետ, 1993-1998: Մինչ այդ թերթը հին ձեւով կը գրաշարուէր՝ կապարով. ես ասիկա համակարգչային ձեւին վերածեցի: Զոն էր որ զգացի հայ տպագիր մամուլին եւ գիրքերուն կարեւորութիւնը, հայապահպանումի գործընթացին մէջ, որուն գործօններէն մէկն ալ «Ձահակիր»ն է:

Զրուցող - Զամաձայն եմ, բայց կը կարծե՞ք որ այսօր սփիւռքահայ մամուլը ունի նոյնքան ընթերցող, որքան անցեալին:

ՄԳ - Բնաւ. թիւը շատ նուազած է անշուշտ: Բայց պէտք է յանձնուինք, պէտք է պայքարինք, պէտք է ջանանք որ հայ գիրը տուններէ ներս մտնէ, բաժանորդագրութեամբ թէ այլ ձեւով.

գոնէ առիթ տուած ըլլանք որ մարդիկ թերթը ունենան իրենց սեղանին վրայ: Որովհետեւ աշակերտը, դպրոցը աւարտելէ ետք, տան մէջ հայ գիրք չի տեսներ: Զայերէն գիրք գնել կամ հայկական մամուլի բաժանորդագրուիլ գոյութիւն չունի: Մամուլի իւրաքանչիւր պատասխանատու, կարելիութեան սահմաններուն մէջ, պէտք է սովորութիւնը պահպանէ: Ես մասնագետ չեմ, բայց պէտք է մտածել նաեւ հայ մամուլն ու գիրքը հայապահպանումի աշխատանքներուն ծառայեցնելու մասին: Որովհետեւ իմ համոզումովս, համակարգչային բոլոր գրութիւնները նոյն ազդեցութիւնը չունին, որքան տպագիր գիրք:

Զրուցող - «Ձահակիր»ի քանի՞ բաժանորդ ունիք, Գահիրէ եւ Ադեքսանդրիա:

ՄԳ - Մօտաւորապէս հարիւր վաթսուն: Ասոնցմէ զատ «Ձահակիր» կը դրկուի նաեւ սփիւռքի աւելի քան տասը երկիրներ՝ նախկին եգիպտահայերու, հայկական համալսարաններու, միութիւններու, գրադարաններու, լեզուի ամպիոններու, մամուլին եւ այլն:

Զրուցող - Այդ բոլոր բաժանորդներն ալ թերթը կը կարդա՞ն:

ՄԳ - Փոքր տոկոսը միայն: Բաժանորդներուն հազիւ 25-30%-ը:

Զրուցող - Բայց դուք համոզուած էք որ թերթը եթէ տունէն ներս մտնէ, կրնայ բան մը փոխել:

ՄԳ - Այո՛: Բայց մինչեւ օրս չեմ հանդիպած գրութեան մը, որ ուսումնասիրէ «հայ մամուլին ներկայ դերը Սփիւռքի մէջ» նիւթը: Թէ ի՞նչ դեր կրնայ ունենալ հայ մամուլը, կարեւոր հարցադրում մը, որմով սակայն ոչ ոք հետաքրքրուած է: Որովհետեւ նախապէս, անցեալին, մամուլը այլ դեր ուներ, այսօր՝ այլ: Ի՞նչ է ասիկա: Գտնել պատասխանը, համոզուիլ եւ գործադրել: Նախապէս, գոնէ Միջին Արեւելքի մէջ, թերթը միջազգային եւ հայկական լուրեր ստանալու միջոց էր, այսօր չէ:

Զրուցող - Ուրեմն ի՞նչ է այսօր հայ մամուլին դերը:

ՄԳ - Իմ կարծիքովս մամուլը երկու դեր ունի՝ նախ մշակոյթ փոխանցել, ինչպէս գրականութիւն, երկրորդ՝ գաղութին լրատուամիջոցը դառնալ եւ այդպիսով գործնա-



կան ազդեցութիւն ունենալ համայնքի կեանքին վրայ:

Չրուցող - Միջանկեալ ըսեմ, որ Կիւլպէնկեան հաստատութիւնը, որուն աշխատանքին կարելոր մէկ մասը գիրքերու հրատարակութիւնն էր, վերջին տարիներուն, ըստ յայտարարութեան, դադրած է «իսկական» գիրքեր հրատարակելէ, մանաւանդ մանկապատանեկան թէ երիտասարդական գիրքերու պարագային, եւ անցած համացանցային տարբերակին, որովհետեւ համոզուած է թէ երիտասարդները աւելի մօտ են համացանցին, քան տպագիրին: Չէ՞ք խորհիր որ ասիկա ձեւ մըն է պատանիներն ու երիտասարդները գրաւելու:

ՄԴ - Հարկաւ համացանցը աւելի արդիական է, բայց չի կրնար տպագիրին տեղը առնել: Համացանցը արագ տեղեկութիւն քաղելու եւ նախընտրութեամբ ընթերցելու համար է:

Չրուցող - Որովհետեւ դուք ՀԲԸՄի անդամ եք, իսկ այս հարցազրոյցը «Տեղեկատու»ին համար է, կրնա՞ք ըսել թէ ի՞նչ է «Տեղեկատու»ին դերը եգիպտահայ կեանքին մէջ եւ Սփիւռքի տարբեր գաղութներուն համար:

ՄԴ - «Տեղեկատու»ն սկիզբէն եղած է ՀԲԸՄի, Եգիպտոսի եւ ընդհանրապէս արտասահմանի խօսնակը, եւ ոչ՝ լուրեր փոխանցելու միջոց. եւ առ այդ, թերթը միայն անդամներուն կը բաժնուեր: Աւելի ուշ լայնցաւ ընթերցողներուն շրջանակը, երբ որոշեց իր էջերուն մէջ ընդգրկել եգիպտահայ այլ կառոյցներու գործունեութեան լուրերը նաեւ:

Չրուցող - Շնորհակալութիւն այս շահեկան զրոյցին համար:

Չրոյցը վարեց՝ Մ. Երամեան

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՆՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԔՐԻՍՏՈՍԻ ԳԵՐԵՉՄԱՆԻ ՏԱՃԱՐԻՆ



Հոգիի խորունկ գոհունակութեամբ այսու կու գանք յայտարարել թէ Երուսաղէմի մէջ, Տիրոջ գերեզմանին նորոգութեան աշխատանքները սկսած են, եւ մենք, որպէս նախկին սաղիմապատկան թեմ, ընդառաջելով Ամենայն Հայոց Հայրապետի յորդորին, մասնակցութիւն բերած ենք այս ծրագրին, աշխարհասփիւռ հայութեան հետ միակամ:

326 թուականին Կոստանդիանոս կայսեր եւ մօրը՝ Զեղինէի կառուցած հոյակապ տաճարը Յիսուս Քրիստոսի լոյս գերեզմանին վրայ, 1808 թուականի հրդեհին պատճառով ծանրօրէն վնասուած էր,

հակառակ որ Հայոց Տեսուչը իր փութացած էր հրդեհը մարելու, սակայն չէր յաջողած եւ կեանքը գոհած էր:

Ներկայ կառոյցը արդիւնքն է 1810 թուականին կատարուած հապճեպ նորոգութեան մը, որ այսօր փլուզումի վտանգին առջեւ կը գտնուի:

Ընթացիկ տարուան սկիզբը համաձայնագիր մը ստորագրուած է կառոյցին սեփականատէր եւ իրաւատէր երեք յարանուանութեանց եւ Աթէնքի համալսարանի հնագիտական բաժանմունքին միջեւ, սկսելու Սուրբ Գերեզմանի շէնքին վերականգնումի աշխատանքները, որոնց ծախքերը պիտի վճարուին սեփականատէր եւ իրաւատէր երեք յարանուանութեանց՝ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան, Երուսաղէմի Յոյն Ուղղափառ Պատրիարքութեան եւ Սուրբ Երկրի Պահապան Ֆրանչիսկեան Միաբանութեան կողմէ:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՒՆ ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԶԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ ՄԱՆԿԱՏԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԶԱՄԱՐ

Հայրենիքի հանդեպ պարտականության գիտակցությունը ոչ միայն իւրաքանչիւր հայու ամօրեային մէջ պետք է ըլլայ, այլ նաեւ դառնայ աղբիւրը մեր ուրախութեան: Հայրենի սահմանամերձ տարածքներու մեր հայրենակիցներուն, մանաւանդ անոնց մանուկներուն օգնութեան ձեռք երկարելը հայօրէն ապրելու կենսաձեւերէն մէկն է, իսկ դպրոցներու կառուցումը, վերաշինութիւնը կամ նիւթականօրէն սատարելը, հիմնահարց է մեզի համար, աւելի՛ առաքելութիւն:

Գիտակից այս մօտեցումով Գահիրէի Պատկառելի Թեմական Ժողովը մասնաւոր պիտոճէ մը վաւերացուցած է 2016ի համար՝ նպատակ ունենալով աջակցիլ Մայր Հայրենիքի կրթական եւ բարեսիրական հաստատութիւններուն: Այս ծիրէն ներս առաջին յատկացումը կատարուեցաւ Գիւմրիի «Թռչունեան Տուն» որբանոցին կողքին գտնուող «Հրանդ Տիւնք» գիշերօթիկ դպրոցին, ուր կ'ուսանին որբանոցի 80 սաներն ու կից թաղէն եկող 75 մանուկներ, որոնց համար «Հրանդ Տիւնք»ը միակ մօտակայ դպրոցն է:

Այս վարժարանը նախապէս կը հովանաւորուէր Կիւլպէնկեան հաստատութեան կողմէ. այս տարի սակայն, զանազան պատճառներով դադրեցուած է յատկացուող օժանդակութիւնը, եւ դպրոցը, իր 155 աշակերտներով, 23 ուսուցիչներով եւ 29 այլ պաշտօնեաներով կը գտնուէր փակուելու վտանգին առջեւ:

Այսօր կրնանք սրտի գոհունակութեամբ յայտարարել որ Քաղաքական Ժողովին կողմէ Գիւմրիի այս դպրոցին օժանդակելու ծրագիրը գործադրուած է եւ աշակերտները ապահով կերպով կը շարունակեն իրենց ուսումը:

Նշենք նաեւ որ ուսման ընթացքը 12 տարի է, դասարաններու աշակերտութեան միջին թիւը՝ 12: Շրջանաւարտներէն 36-ը ծառայած են եւ կը շարունակեն ծառայել Հայաստանի Հանրապետութեան բանակին մէջ, իսկ աշակերտներուն 80%-ը համալսարան ընդունուած է:

Այս մանրամասնութիւնները կը հաստատեն դպրոցի պաշտօնեութեան ազնիւ աշխատանքը ոչ միայն ուսման, այլ եւ հայ հոգիի կերտումին մէջ, եւ անգամ մը եւս կը յիշեցնեն հայ դպրոցին եական կարելորութիւնը, ո՛ւր որ ալ գտնուի այդ դպրոցը, մեր հայրենիքի սահմանամերձ շրջաններէն մինչեւ սփիւռքի իւրաքանչիւր գաղութին մէջ:

ԵՐԵՔ ԿԱՐԵՒՈՐ ՅԱԻՆԼՈՒԱԾՆԵՐ

Ընթացիկ տարուան՝ 2016-ի ընթացքին «Ջահակիր»ի խմբագրութիւնը ունեցած է թերթին սովորական համարներու կողքին յաւելուածներ հրատարակելու յոյժ գնահատելի գաղափարը:

Մինչեւ այսօր լոյս տեսած են երեք յաւելուածներ.

- «Չորս հարցազրոյց Հրանդ Տիւնքի հետ»
- «Մեծ Եղեռնի Հարիւրամեակ, Յիշողութիւններ եւ Մարտահրաւերներ, Հայր Լեւոն Չեքիեան»
- «Թեոդիկի Նամակները Արարատ քրիստեանին»

Գրքոյկները նոյն չափով՝ 16x23.5 սմ, կը տարուբերին 40-60 էջի սահմաններուն եւ ունին նախաբան, գրուած «Ջահակիր»ի խմբագրական խորհրդատու Հայկ Աւագեանի գրիչով:

Այս նախաբաններէն կը հասկնանք որ առաջին երկու գրքոյկները վերծանուած են համացանցին մէջ գտնուող (ընդհանրապէս you tube) տեսերիզներէ, որոնց անգլերէնէ թարգմանութիւնն ու խմբագրումը եւս կատարած է Հ. Աւագեան: Այդ նախաբաններուն մէջ յիշուած են տեսերիզներուն համացանցային լրիւ հասցէները կամ կայքէ-



ջերուն մանրամասնությունները:

Ատենին մեծ հետաքրքրություն ստեղծած էր Յ. Տինքի չորս հարցազրույցները ամփոփողառաջին յաւելուածը, հակառակ անոր որ շատեր դեմ են Տինքի արտայայտած գաղափարներուն, առանց նկատի առնելու թէ Տինք միշտ ապրած է Թուրքիոյ մէջ, ուր պայմանները շատ տարբեր են մեզի ծանօթ սփիւռքեան կեանքի պայմաններէն:

Յաջորդ երկու գրքոյկները հրատարակուած են նախորդ ամիսներուն. շահեկանութեան համար կ'անդրադառնանք անոնց:

Երկրորդ գրքոյկը ամբողջական դասախօսութիւնն է Հայր Լեւոն Չեքիեանի, Երեւանի Ամերիկեան Համալսարանի Հայ Մատենագրութեան Թուանշային Գրադարանին կողմէ կազմակերպուած, եւ որ կ'անդրադառնայ Ջարդին առնչուող այնպիսի հարցերու, որոնց ընդհանրապէս ուշադրութիւն չենք դարձներ:

Երրորդը Թեոդիկի նամակներն են Արարատ Զրիսեանին. թիւով տասնվեց նամակներ, որոնց բոլորին ալ լուսապատճենները ներառուած են գրքոյկին մէջ:

«Ներկայ դարասկիզբին, եգիպտահայ մամուլի մը պատասխանատուները, տեղի սղութեան պատճառով, որոշեցին ձերբագատուիլ ամբողջ սենեակ մը գրուած ձեռագիր տրցակներէ եւ կարգ մը պարբերականներէ», կը գրէ գրքոյկին խմբագիրը:

«...Ձեռագիրներուն մեծ մասը կը կազմէին տուեալ մամուլին մէջ տպագրուած յօդուածներուն ինքնագիրները: Այնտեղ սակայն գտայ հետեւեալ երեք ձեռագիրներուն ծրարները.

Ա.- Արփիար Արփիարեանի անձնական ծրարը, ուր կը գտնուէին Արշակ Չօպանեանի, Լեւոն Բաշալեանի, Տիգրան Արփիարեանի եւ այլոց նամակները՝ ուղղուած Ա. Արփիարեանին:

Բ.- Թեոդիկի նամակները՝ ուղղուած Արարատ Զրիսեանին:

Գ.- Միքայէլ Կիրճեանի ֆրանսերէն բաւաստեղծութիւններու սեւագրութիւնները:

«... 2001-ին Արփիարեանի եւ Կիրճեանի ծրարները անձամբ յանձնեցի Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, իսկ Թեոդիկը՝ նոյնպէս անձամբ, Փարիզի

Նուպարեան Մատենադարան»:

Ասիկա փոքրիկ մէջբերում մըն է Թեոդիկի նամակներուն նուիրուած յաւելուածին «Նախաբան»էն, որ կրկին անգամ կը հաստատէ ցաւալի երեւոյթ մը սփիւռքեան մեր իրականութենէն՝ հայերէն գիրքերու եւ մամուլի դեզերէն «ձերբագատում»ի հակումը: Այդ ծրարները, երբեմն բախտի բերումով, կ'ունենան գիրքնք փրկող ձեռք մը, հայ գիրին հաւատացեալ մը, որ ո'չ միայն կը փրկէ, կը դասաւորէ, կը խմբագրէ եւ լոյսին կը բերէ, այլ նաեւ վերջաւորութեան բարեյուսոյ հրուանդան կը հասցնէ զանոնք, պահ տալու համար ապահով վայր մը, ուր կը յուսանք - ա'լ «ձերբագատում»ի վտանգ չի սպառնար անոնց:

Նման շնորհակալ աշխատանք տարած է ատենին Անդրանիկ Ծառուկեանը, երբ իր հոտառութեան եւ անհատական հմայքին շնորհիւ կրցած է կորուստէ փրկել կարելոր եւ դժուար գտանելիքնագրեր, ինչպէս Գրիգոր Զօհրապի ամբողջ արխիւը, Զօրավար Անդրանիկի յուշերու տետրակը կամ այլ գործեր:

Կարգ մը ընթերցողներ թերեւս մտածեն՝ ինչո՞ւ հրատարակել գործեր, որոնք արդէն գոյութիւն ունին համացանցին մէջ (առաջին երկու գրքոյկներու պարագային): Պատասխանը պարզ է.

Նախ՝ տեսերիզները անգլերէն լեզուով են, մինչ գրքոյկները՝ հայերէնի թարգմանուած:

Երկրորդ՝ այսօր բրածոյի կարգավիճակ ունեցող «ընթերցող»խաւը մեր ժողովուրդին, ուր միջին տարիքն է գերակշիռը, կը նախընտրէ գիրքով, եւ ոչ համակարգչային ընթերցումը:

Պետք է նշել նաեւ, որ հետաքրքրական է այս յաւելուածներու նիւթերուն ընտրութիւնը, որ կը հաստատէ ոչ սովորական մտածելակերպի մը գոյութիւնը, թարմ շունչ բերելով յաճախ մեր մամուլին:

Հետեւաբար խորապէս գնահատելի այս աշխատանքը կը շնորհաւորենք եւ կը մաղթենք որ «Զահակիր»ի յաւելուածները շարունակեն լոյս տեսնել, ընթերցումի հաճոյք պարգեւելով թէւ սակաւաթիւ, բայց ուշադիր ընթերցողներուն:



ՈՍԿԵՃՈՂ ԱՐՁԱՆՆԵՐ

Վերջերս ներկայ էի կերպարուեստի աշխատանքներու ցուցադրութեանմը: Խորագիրը գրաւիչ էր եւ խոստմնալից՝ «Եգիպտոսի առաջնակարգ արուեստագետներու տարուան լաւագոյն ստեղծագործութիւնները»: Անշուշտ հետաքրքրական է, քանի որ ամէն ցուցադրութիւն հայելին է երկրի մը կեանքին եւ ժողովուրդի իրավիճակին: Վաւերական արուեստը կեանք կը ցոլացնէ, իսկ մուսաները երբե՛ք չեն լռեր, պարզապէս երբեմն կը մտմտան, որ աւելի ուժգին պոռթկան...

Հետաքրքրուած էի անշուշտ տեսնելուս եւ հայրենակիցներուս գործերը: Թող այլ իմաստ չունենայ խօսքս, բայց մեր ժողովուրդը դարերէն եկող իմաստուն խօսք մը ունի՝ «մարդուս հոգիին ու մաշկին աւելի մօտ է նախ ի՛ր շապիկը»: Աչքերս կ'որոնէին ծանօթ ոճ մը, գոյն մը եւ վերջապէս անուն մը՝ (եան), երբ արեւի

շողերու պէս յոյս ու ժպիտ պարգեւեցին Սարգիս Թօսունեանի ոսկեփայլ արձանները: Սեւ կամ սեւցուած արձաններու վրայ բարակ ոսկեփայլը, տեսակ մը արեւ, յոյս կը ներշնչէ դիտողին: Յոյս մը, որ սեւէն, մութէն վերջ, արեւ կ'ըլլայ, լոյս կ'ըլլայ...

Հպարտութեամբ պիտի նշեմ, որ մեր հայրենակիցին անունը Եգիպտոսի լաւագոյն տասը արուեստագետներու ցանկին մէջ է: Վերջապէս «շապիկ»ս գտնելէ վերջ, աչքերս սկսան արուեստի գործեր որոնել: Արժեքաւոր ստեղծագործութիւններ հարկաւ կան, սակայն ասոնց շարքին, դեռ քայլ մըն ալ առաջ, ներկայացուած են այնպիսի գործեր, որոնք արուեստի ստեղծագործութենէ զատ ամէն բան կրնան ըլլալ: Կը շրջիմ ցուցասրահները եւ միտքս կը կրկնէ հանճարեղ Շիրազի տողերը.





«...Մարդիկ կան, որոնք փրփուրի նման
Միշտ կեանքի ծովի երեսն են ելնում,

Բայց խորքում որքան մարգարիտներ
կան,

Որոնց փառքը դեռ փրփուրն է խլում»:

Կը շարունակեմ պտոյտս սրահներէն
ներս: Ուշադրութիւնս կը գրաւէ հնամաշ
տախտակ մը, գունաւոր, փայլուն եւ ոչ-
փայլուն քանի մը քարերով. համադրու-
թի՞ն է, գուլա՞ժ է թէ այլ բան, չեմ գիտեր,
բայց հետաքրքրական է: «Կինը» խորագրով
հնամաշ տախտակը մոմիայի տպավորու-
թիւն կը ստեղծէ, գունաւոր քարերը կա՛մ
կնոջ զարդերն են, կա՛մ ... Տախտակի
ճեղքերէն կը նշմարուի պզտիկ ոսկեգոյն
մը, որ հաւանաբար սիրտն է՝ կնոջական
ոսկի սիրտը: Հեղինակը այնպէս տեղադ-
րեր է սիրտը, որ միայն ուշադիր աչքը կը
նշմարէ: Արուեստագետը առիթ տուած է
դիտողին քիչ մը խորհիլ: Ի՞նչ է այս գործին
նպատակը, չեմ գիտեր, բայց ես տեսայ կի-
նը իր ծալքերուն մէջ: Նոյնիսկ մոմիա վի-
ճակի մէջ՝ կինը կին կը մնայ իր զարդե-
րով եւ ոսկի սրտով... Նազանք կայ այս
բոլորին մէջ, անշուշտ տեսնողին համար:
Մտածելու մղող արուեստին արժէքը ան-
լի մեծ է: Կան խիստ ճշան գոյներ, կան
մեղմ, նոյնիսկ անգոյն կտաւներ: Ճիշտ
կեանքին նման

Քայլերս զիս կը տանին մեր արձանա-
գործ հայրենակից Սարգիս Թօսունեանի
գործերուն սրահը: Եթէ արձաններուն ոս-
կեփայլը չըլլար, գուցէ չգտնէի, որովհե-
տեւ շուրջը արուեստասէր դիտողներ շատ
կային հաւաքուած: Դիւրին չեղաւ արձան-
ներուն մօտենալը: Խումբ մը, որոնց խօս-
քէն գուշակեցի թէ մոտելային աշխարհի
մարդիկ էին, անթարթ հայեացքներով կը
դիտէին եգիպտահայ արուեստագետ Սար-
գիս Թօսունեանի «Մոտելներ» արձանա-
խումբը: Պրոնզէ գեղեցկուհիները դեմք չու-
նին, բայց այնքան նազանքով ու կնոջա-
կան կեցուածքով կանգնած են որ կը
գրաւեն իւրաքանչիւր ակնդիր: Պաղ մե-
տաղէ կերտուածքի վրայ, վերէն վար
ծգուող բարակ ոսկեգոյն փայլը, գեղե-

ցիկ սլացիկութիւն, ջերմութիւն եւ քնքշու-
թիւն կը պարգեւէ քանդակներուն: Անոնց
գեղեցկութիւնը դեմքը չէ, որովհետեւ մի-
այն մարմիններ կը ցուցադրեն:

Եթէ քանդակները դեմք չունին, երկա-
րավիզ այս աղջիկը դեմք ունի, առանց
մարմնի: Կին է, գեղեցիկ է, կանացի է, նա-
զանք ու քնքշանք կը սփռէ շուրջ: Փարա-
ոնական ժամանակներու ոճով քանդակու-
ած գլխուն համադրուած է ժամանակակից
սանտրուածք, որ ավելի գեղեցիկ կը դարձ-
նէ հոլանի ուսերն ու կուրծքը: Հինը հա-
մադրելով նորին, ժամանակակիցին, արու-
եստագետ Սարգիս Թօսունեանը վեր կը-
հանէ կնոջ յավերժական գեղեցկութիւնը:
Միշտ կը զարմանամ, թէ ինչպէ՛ս պաղ ու
կոպիտ մետաղներուն այսքան նրբագեղու-
թիւն ու քնքշանք կրնայ տալ արուեստագե-
տը:

Բոլոր արուեստագետները չէ որ ներկա-
յացուած են քանի մը գործերով: Թերեւս
օրուան խնդիրը տեսած են ցուցադրութե-
ան կազմակերպիչները, որ մեր հայրենակ-
ցին նաեւ ա՛յս գործը ընտրեր են. կեանքի
հոգերուն թէ աշխատանքի ծանրութենէն
կքած տղամարդու հայեացքը յոգնութեամբ
լեցուն է, բայց աչքերը հեռուն կը դիտեն.
մարդուն աչքերը կ'ըսեն թէ ամէն յոգնու-
թիւն ապագային համար է: Մեր հայրենա-
կիցին գրեթէ բոլոր գործերը լաւատեսու-
թիւն կը ներշնչեն, նաեւ ապագային հան-
դեպ: Եւ արձաններուն ոսկեթել շողերը իր
լաւատեսութեան ապացոյցն են:

Եգիպտահայ հանրածանօթ արուեստա-
գետ, բազմաթիւ մրցանակներու եւ պետա-
կան պարգեւներու արժանացած, ինչպէս
նաեւ Հայաստանի Հանրապետութեան
Նկարիչներու Միութեան Պատուաւոր ան-
դամ Սարգիս Թօսունեան, այս ցուցադրու-
թեան ներկայացրէ է լաւատեսութեամբ եւ-
պատշաճ մակարդակով, բարձր պահելով
եգիպտահայու արժանապատուութիւնը:

Անժիկ Կանիմեան



ԱՐԱՔՍ ԵՐԳՉԱԿՍՈՒՄԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ «ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՌԱՏՕՆԻՆ

Հայաստանի Հանրապետության նախագահի բարձր հովանաւորութեամբ ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը երրորդ անգամ ըլլալով կը կազմակերպէ «ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ» համահայկական փառատօնը (Օգոստոս 2016), որուն երկրորդ անգամ ըլլալով իր մասնակցութիւնը բերաւ Գահիրէի Ազգային Առաջնորդարանի ԱՐԱՔՍ երգչախումբը՝ Միհրան Ղազէլեանի ղեկավարութեամբ (առաջին մասնակցութիւնը 2012-ին էր):

«Երգչախմբային Արուեստի Օրեր»ուն, որ տեղի ունեցաւ Օգոստոսի 5-10, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երգչախումբերէն բացի, փառատօնի մասնակից երկիրներու աշխարհագրութիւնը ներառած էր սփիւռքի հետեւեալ երկիրները՝ Վրաստան, Ռուսաստան, Իրան, Եստոնիա, Սուրիա, Լիբանան, Եգիպտոս:

Փառատօնի երգչախմբային օրերուն տեղի ունեցան չորս տարբեր երեկոյթներ, որոնց ընթացքին ԱՐԱՔՍ երգչախումբին կողմէ կատարուեցան տասներեք երգ առանձին եւ մէկ երգ՝ բոլոր երգչախումբերուն հետ միասնական կատարումով:

5 Օգոստոսին տեղի ունեցաւ բացման հանդիսաւոր համերգը Հայֆիլհարմոնիայի «Արամ Խաչատրեան» մեծ համերգասրահին մէջ համերգավարութեամբ սիրուած հաղորդավար եւ ասմունքող Սարգիս Նաճարեանի: ՀՀ Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանի անունով ողջունելով փառատօնի մասնակիցները՝ Նախարարի տեղակալ Սերժ Սրապիոնեան նշեց. «Շնորհակալ ենք, որ ընդունեցիք մեր հրաւերը եւ այսօր մասնակցում էք փառատօնին: Համայնքներում կատարած ձեր հայապահպան գործունեութիւնը արժանի է ամենամեծ դրուատանքի:

Հանդիսաւոր բացումին հետեւեցան մասնակից երգչախումբերու յաջորդական ելոյթները: ԱՐԱՔՍ երգչախումբը ներկայացաւ Խաչատուր Աւետիսեանի «Հայոց Հովիկ»ի եւ «Կենաց Երգ»ի, իւրօրինակ կատարումներով (երգչախմբային փոխադ-

րումները Միհրան Ղազէլեանի), որոնք ընդունուեցան մեծ խանդավառութեամբ: Համերգի ակարտին ելոյթ ունեցաւ արդէն ակելի քան կէս դար խմբերգային արուեստի չափանիշ հանդիսացող Հայաստանի Պետական Ակադեմիական Երգչախումբը, ղեկավարութեամբ ԽՍՀՄ եւ Հայաստանի ժողովրդական արտիստ Յովհաննէս Չեքիճեանի: Ապա, եզրափակիչ երգին, բոլոր մասնակից երգչախումբերը (ակելի քան 350 հոգի) միանալով Հայաստանի թիւ մէկ երգչախումբին, կատարեցին «Հայրենիքիս Հետ» երգը (խօսք՝ Յ. Թումանեան, երաժշտ.՝ Ալ. Յարութիւնեան), միասնաբար հնչեցնելով ամենայն հայոց բանաստեղծին լոյսի եւ յոյսի հայրենիքի պատգամը:

Փառատօնի եզրափակիչ համերգը տեղի ունեցաւ 10 Օգոստոսին, Յակոբ Պարոնեանի անուան Երաժշտական Քոմետիայի Թատրոնի սրահին մէջ՝ համերգավարութեամբ Սարգիս Նաճարեանի, ուր մասնակից երգչախումբերը իրենց կատարումներով վերջին անգամ ներկայացան հայրենի հանդիսատեսին: ԱՐԱՔՍ երգչախումբը կատարեց Խաչատուր Աւետիսեանի «Հազարաթեւ Հայաստան», Աննօ Բաբաջանեանի «Կանչէ Չիս» եւ «Կիրակի» երգերը:

Ասիկա եզակի առիթ էր մեր երգչախումբին եւ անոր իւրաքանչիւր անդամին համար՝ սփիւռքեան եւ հայաստանեան այլ եւ այլ երգչախումբերու ունկնդրումով արժեւորել իր իրական տեղը եւ ևորոգուած ոգեշնչումով շարունակել երաժշտական տարողական կատարելագործման ակվերջ, դժուարին եւ միայն ամբողջական նուիրումով իրականացուող աշխատանքը: Այդ իմաստով, այս համերգային ուղեւորութիւնը եւս արդարացուած էր թե՛ ակնկալիքներու եւ թե՛ ձեռքբերումներու իմաստով:

Պետք է ըսել որ ակնկալիքները ամբողջութեամբ իրականութիւն դարձան, երբ «Արաքս» երգչախումբն ու ղեկավար Միհրան Ղազէլեան իրենց վերադարձէն ետք ստացան «Լաւագոյն Գեղարուեստական



խումբը» բաժնին առաջին մրցանակը (վկայագրով), մետալն ու դրամական խորհրդանշական պարգև մը, «հայապահպանութեան գործում նշանակալի աւանդի համար», ՀՀ Սփիւռքի Նախարարութեան Համահայկական Ծրագրերու Վարչութեան կողմէ:

Ուրախութեամբ կ'իմանանք նաեւ թէ Գահիրէի ՀԲԸՄ-ի «Ծիածան» մանկական երգչախումբը արժանացած է երրորդ կար-

գի դիպլոմի, որպէս «Լաւագոյն գեղարուեստական խումբ», 2015 թուականի համահայկական ամենամեայ մրցանակաբաշխութեան:

Կը շնորհաւորենք «Արաքս» եւ «Ծիածան» երգչախումբերն ու անոնց ղեկավարները՝ Միհրան եւ Գոհար Ղազէլեանները, եւ յարատեւ յաջողութիւն կը մաղթենք իրենց ազգանուեր եւ մշակութանուեր գործունեութեան:





ԵԳԻՊՏԱՀԱՅ ՊԱՏԱՆԻՆԵՐ ԹՈՒՄՈՅԻ ՄԷՋ

Յուլիս 17-էն մինչեւ Օգոստոս 2, եգիպտահայ 12 պատանիներ եւ պարմանուհիներ (բոլորը 2000 թուականի ծնունդ) գացած էին Երեւան, առաջին անգամ ըլլալով մասնակցելու համար Թումօ կեդրոնի ամառնային դասընթացքներուն: Այս 12-էն եօթը Գալուստեան-Նուպարեանի աշակերտ են, մէկը Աղեքսանդրիայէն է, իսկ մնացեալները՝ օտար դպրոցներ յաճախող տղաք:

Աբիկեան Ճորճ Արամ, Աւանեան Բերլա, Ղազէլեան Մեսրոպ, Մազլումեան Երուանդ (Աղեքսանդրիոյ Պօղոսեան վարժարանէն), Մակոտի Մակի, Միտիկեան Եար, Յարութ Յովան, Չամբերթենեան Ռիթա, Սայեան Լիլիթ, Սիմոնեան Նուպար, Տեր Ներսեսեան Արի, Քելլեան Անդրանիկ:

Այս ծրագիրը ամբողջութեամբ, նիւթապէս թէ ծրագրումի առումով, որդեգրուած էր Գահիրէի Ազգային Առաջնորդարանին կողմէ, իսկ կապերն ու գործնական քայլերը Երեւանի Թումօ կեդրոնին հետ յառաջ տարուած էին Զաղաքական Ժողովի երիտասարդ անդամներէն Պր. Այգ Չաքարեանի միջոցով:

Տղոց պատասխանատու պաշտօնեայ որպէս ընկերացած էր տիկ. Սիւզի Լաչինեանը, իսկ Պր. Ռուբէն Սիմոնեան ընկերացած էր որպէս ընդհանուր պատասխանատու:

ԹՈՒՄՈ

«Թումօ տեղծագործական թեքնոլոճի կեդրոն»ը, որ հիմնուած է 2011 թուականին եւ կը գտնուի Թումանեան այգիի հարեւանութեամբ, ուսանողական նոր միջավայր է, ուր 12-18 տարեկան պատանիներ կ'ուսանին արտա-դպրոցական ժամերու, հմուտ մանկավարժներու եւ մետիա-մասնագէտներու աջակցութեամբ: Այստեղ իւրաքանչիւր ուսանող ինք կ'ընտրէ ուսումի իր ծրագիրը: Այս դասընթացքները կը սատարեն աշակերտներուն իրենց գալիքի գործնական կեանքին մէջ: Ուսուցումը գլխաւորաբար թուային մետիայի ոլորտին մէջ է որ կ'ընթանայ:

ԶՐՈՅՑ

Թումոյի ամառնային ծրագրին մասնակցած պարմանուհիներէն **Լիլիթ Սայեանի** եւ պատանիներէն **Մեսրոպ Ղազէլեանի** հետ ունեցանք հետեւեալ հարցազրոյցը:

Յարցում - Առաջի՞ն անգամն է որ կը մասնակցիս Թումոյի դասընթացքներուն: Ի՞նչ կը սպասէիր եւ ի՞նչ գտար:

Լիլիթ - Այո՛, առաջին անգամն է որ կը մասնակցիմ: Սպասածես քիչ մը տարբեր էր, բայց շատ հաճելի էր, դպրոցի նման, բայց աւելի ազատ ձեւով:

Մեսրոպ - Այո՛, առաջին անգամն է որ կը մասնակցիմ Թումոյի դասընթացքներուն: Մեծ ակնկալիքներով գացի եւ լիովին բաւարարուած վերադարձայ:

Յ. Ինչպէ՞ս էր ձեր առօրեան Թումոյի մէջ եւ ի՞նչ մասնագիտութիւններ կային:

Լիլիթ - Երկու մասնագիտութիւն կ'ընտրես. նախ առաջինով կը զբաղիս մէկ ժամ, որմէ ետք դադար կ'առնէիք՝ կ'ուտէիք, կը խաղայիք, կը խօսէիք եւ այլն: Մասնագիտութիւնները հետեւեալներն են՝ 2D graphics, 3D modeling, film making, երաժշտութիւն, նկարչութիւն, animation, լուսանկարչութիւն, robotics, web design and development, եւ այլն:

Մեսրոպ - Թումոյի մեր առօրեան կարծես համադրած էր օգտակարը հաճելիին: Չորս հիմնական մասնագիտութիւններ կային՝ խաղերու ստեղծում, ռոպոթաշինութիւն, ֆիլմարտադրութիւն եւ նկարչութիւն:

Յ. Ի՞նչ էր քու ընտրութիւնդ եւ ի՞նչ էր աշխատելու կամ սորվելու ձեւը:

Լիլիթ - Առաջին շաբաթը երգ եւ film making ընտրեցի, իսկ երկրորդ շաբաթը film making-ի փոխարէն animation առի:

Բոլոր մասնագիտութիւնները համակարգիչով կը սորվէիք եւ թեքնոլոճիք-տեքնորական սարքերով:

Մեսրոպ - Իմ ընտրածներս էին՝ 3D մոտելաւորում, 2D մոտելաւորում եւ խաղերու ստեղծում, օրական չորս աշխատանքային ժամերով:

Յ. Երբ դասընթացքին օրերը վերջացան, վկայագիր ստացա՞ք: Գո՞հ ես դուն քու աշխատանքդ: Պիտի ուզե՞ս կրկին մասնակ-



ցիլ:

Լիլիթ - Հարկաւ վկայագիր ստացայ, եւ անշուշտ գոհ եմ աշխատանքէս. բայց եթէ ուրիշ անգամ երթամ, կարծեմ աւելի փորձառու կ'ըլլամ: Եթէ հնարաւորութիւն ըլլայ, ինչո՞ւ ոչ, կրկին կը մասնակցիմ:

Մեսրոպ - Այո, վկայագիր ստացանք: Աշխատանքէս գոհ եմ, բայց աւելի լաւ կրնար ըլլալ: Անշուշտ պիտի ուզեմ կրկին մասնակցիլ:

Հ. Կը կարծե՞ս որ այս դասընթացը ազդեցութիւն պիտի ունենայ ապագային ուսումի քու ընտրութեանդ վրայ: Ի՞նչ ձեռով:

Լիլիթ - Կը կարծեմ՝ այո, որովհետեւ այն նիւթերը որ ընտրեցի, հետաքրքրական են, օրինակ համալսարանին մէջ ճիւղ մը կայ mass communications, եթէ այս ճիւղը ընտրեմ, Թումոյի մէջ սորվածներուս նման բաներու մէջ կրնամ մասնագիտանալ:

Մեսրոպ - Այո, տոյնիսկ վստահ եմ որ ազդեցութիւն պիտի ունենայ, որովհետեւ աւելի ինքնավստահ կերպով կրնամ ընտրել ուսանելիք ճիւղս:

Շնորհակալութիւն **Լիլիթին** եւ **Մեսրոպին**, եւ յաջողութեան մաղթանքներ իրենց ապագայի կեանքին համար:





«ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԱՔԱԿԱՆ ԱՃԽԱՐՀԻՆ ՄԷՋ»

Այս է խորագիրը այն համագումարին, որ տեղի ունեցավ Գահիրեի համալսարանէն ներս, Յոկտեմբեր 18-19-ին, կազմակերպութեամբ «Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոն»ին:

Այս կեդրոնը մաս կը կազմէ Գահիրեի Համալսարանի Գրականութեան կաճառի (faculty) Արեւելեան լեզուներու բաժնին:

Համագումարը Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնին (ասկէ ետք՝ ՀՈԿ) կարելի է ծրագրիւններէն է, որոնցմէ մէկն ալ հայերէն լեզուի ուսուցումն է համալսարանի ուսանողներուն եւ ոչ-համալսարանական այլ փափաքողներու:

Կեդրոնին ներկայի տնօրէնն է ասորագետ դոկտ. Սալահ Ապտէլ Ազիզ Մահկուպ:

Հակառակ անոր որ Սփիւռքը իր սկզբնական շրջանին գլխաւորաբար Միջին Արեւելքի արաբական երկիրներուն մէջ կազմաւորուած է, սակայն հայ-արաբական յարաբերութիւնները, բացի կարգ մը անհատական ճիգերէ, բաւական ուշ սկսած են զարգանալ: Այսօր նման լուրջ ձեռնարկներ կը բանան արաբական պատմական արխիւներու հսկայ շտեմարան մը, ուր կարելի է մեր հին եւ նոր պատմութեան մասին մանրամասնութիւններ գտնել, եւ մութ մնացած կետեր լուսաբանել:

Բնականաբար տեղացի արաբ դասախօսներու թիւը այս համագումարին գերակշիռ էր՝ 15 դասախօսներ, եկած Եգիպտոսի զանազան համալսարաններէն՝ Գահիրեի, Էյն Շամսի, Յելուանի եւ Կանուպ Էլ Ուատիի: Կային նաեւ Գահիրեի Ազգային Վաւերագրերու Կեդրոնէն եւ Եգիպտոսի Ազգային մատենադարանէն երկու գիտաշխատողներ եւ վիպագիր մը, որ նաեւ քաղաքական ընկերաբանութեան ուսումնասիրող է:

Ինը հայեր մասնակցած էին, որոնցմէ վեցը Երեւանէն, մէկը Պէյրութէն, մէկը Պուլկարիայէն իսկ վերջինը Անգլիայէն եկած:

Բաւական լայն էր բացուած ներկայացուած նիւթերուն կարկինը, թէւ անոնցմէ մէկերկուքը ոչ մէկ անմիջական կապ ունէին հայերուն թէ արաբներուն հետ, ինչպէս օրինակ «Մեծն Աղեքսանդրի Եբրայերէն կենսագրութիւնը», «Աղեքսանդր Մակեդոնացիի Պատ-

մութիւնը Պարսկական Գրականութեան Մէջ» կամ «Իրանական մոտերնիզմ շարժումը»:

Պետք է ընդունիլ սակայն որ կային իսկապէ՛ս հետաքրքրական ուսումնասիրութիւններ, ինչպէս օրինակ Գուր'անի հայերէն թարգմանութիւնը, արաբ-իսլամական արխիւներուն կարելորութիւնը հայ-արաբական յարաբերութիւններուն համար, հայկական հարցը եգիպտական ակադեմական աղբիւրներուն մէջ, հայ վարպետներ Եգիպտոսի նորօրեայ պատմութեան մէջ եւ այլն:

Հակառակ նիւթերու հետաքրքրական ըլլալուն սակայն, լսարանը կիսով պարապ էր գրեթէ բոլոր նիստերուն, հաւանաբար նաեւ անոր համար որ այսօր «հայ» անունը Եգիպտոսի այնքան «ընտանի» չէ, որքան ըսենք Սուրիոյ կամ Լիբանանի ժողովուրդին համար:

Նման համագումարներ առիթ կը հանդիսանան որ ոչ միայն գիտական ուսումնասիրութիւններ, ընդհանրապէս հայ-եգիպտական յարաբերութիւններու մասին լոյսին զան, այլ նաեւ բարեկամութիւններ ստեղծուին, եւ ջուրը ինկած քարին յառաջացուցած լայնցող օղակներուն պէս, լայնսայ հետաքրքրութիւնը հայերուն եւ Եգիպտոսի մէջ անոնց ունեցած դերին հանդէպ:

Երկու օրերու վրայ երկարող այս համագումարին արձագանգները կարելի չէղաւ գտնել տեղական մամուլի էջերուն:

Կարճ հարցազրոյց մը ունեցանք Պէյրութի Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութիւններու Կեդրոնի տնօրէն դոկտ. Անդրանիկ Տաքետեանի հետ, որ այս համագումարին կը մասնակցէր «Գործակցութեան Հեռանկարներ Գահիրեի Համալսարանի Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնին եւ Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութիւններու Կեդրոնին միջեւ» նիւթով:

Հարցում - Առաջին անգամն է որ կը մասնակցիք ՀՈԿի համագումարին. ի՞նչ են անկէ ստացած ձեր տպաւորութիւնները:

Պոկտ. Ա. Տաքետեան - Տպաւորութիւնս ընդհանրապէս դրական է: Այս եւ նման գիտաժողովներով կարծես հայութիւնը կը վե-



րադարձուի Միջին Արեւելքի քարտեզին, որով հետեւ Տեղասպանութեան բերումով կովկասեան ժողովուրդի վերածուեցանք: Միջին Արեւելքի բնիկ ժողովուրդ մը ըլլալէ ետք, այսօր գաղթականի կարգավիճակ ունինք նոյն շրջանին մէջ: Չեմ ուզեր քաղաքականութիւն բառը գործածել, բայց մենք «ահլըլ պէդ»՝ տանուտէր եղած ենք: Շատ կարելոր է նաեւ արաբական աշխարհի բազմամշակոյթ կառոյցին համար, որ մենք «մէջը» մնանք: Եթէ արաբները ուզեն իրենց երկիրներուն՝ Սուրիոյ, Լիբանանի, Եգիպտոսի կամ Իրաքի պատմութիւնը գրել, չեն կրնար մեզ մոռնալ, չեն կրնար առանց մեզ յիշելու գրել այդ պատմութիւնը, որովհետեւ վերջին հարիւր տարիներուն մենք եռանդուն գործունեութիւն եւ մեծ նպաստ ունեցած ենք արաբական երկիրներուն մէջ. որեւէ քար դարձուր, տակը հայկական բան մը կը գտնես: Այս ելակետէն ես դրականօրէն կը գնահատեմ համագումարը: Անշուշտ կ'ընդունիմ որ կարգ մը թերիներ կային, բայց անոնք երկրորդական են, մեծ պատկերին մէջ անոնք նուազ կ'երեւին, մանաւանդ եթէ մենք նպատակադրուած աշխատինք:

Նշելով կարգ մը թերիներ, կրնամ ըսել որ յայտագիրը կարելի էր ավելի լաւ ձեւով կազմել, իւրաքանչիւր նիստ կրնար իր առանցքը ունենալ, որպէսզի խաչաձեւումներ եւ կրկնութիւններ չըլլային: Երկրորդ կարելոր խնդիրը՝ նիւթեր կային, որոնք անչլութիւն չունէին հայութեան հետ: Կը կարծեմ որ երբ դասախօսները ընդառաջած են իրենց գացած հրաւերներուն եւ ուղարկած իրենց նիւթերը, այն ատեն պէտք էր ավելի ճիշդ ընտրութիւն կատարուէր:

Յարցում - Ինչո՞ւ կը կարծեք որ հայերուն հետ գրեթէ անչլութիւն չունեցող այդ նիւթերը տեղ գտած են համագումարին մէջ:

Ա. Տաքետեան - Կը կարծեմ որ պարզապէս անփութութեան արդիւնք է եղածը: Միւս կողմէ սակայն այս ձեւով լաւ շարժում մը ստեղծուած է: Ասիկա կրնայ աճիլ եւ լաւ ձեւ առնել, միայն եթէ քիչ մը ավելի հունաւորուած ըլլայ:

Յարցում - Դասախօսներուն մեծամասնութիւնը Եգիպտոսէն էր, չէ՞:

Ա. Տաքետեան - Այո՛, բնականաբար: Այս մասին կրնամ նախանձով խօսիլ եւ ըսել՝ ի տարբերութիւն լիբանանցիներուս, Լիբանանի մէջ այսպէս չէ պատկերը:

Յարցում - Ըսել կ'ուզեք որ տեղացի, լիբանանցի արաբը այսքան հետաքրքրութիւն չի ցուցաբերեր հայութեան հանդէպ, թէեւ հաւա-

նաբար տոկոսային առումով հետաքրքրուող լիբանանցիները ավելի մեծ տոկոս կը կազմեն:

Ա. Տաքետեան - Կրնայ ձեր ըսածը ճիշդ ըլլալ: Հոս ալ սակայն տեղական ակադեմական միջավայրի ուժերը ներգրաւելու աշխատանք մը կը տարուի: Մեր քով այս տարողութեամբ չէ այդ աշխատանքը: Օրինակ մը տալու համար ըսեմ որ 36 հատոր Հայկազեան Հայագիտական Հանդէս հրատարակած ենք, 750 յօդուածներ կան, բայց արաբերէն յօդուածներուն թիւը հինգը չ'անցնիր: Ասիկա բան մը կը նշանակէ, չէ՞:

Յարցում - Կը կարծե՞ք որ վերջին տարիներուն աշխուժացած այս հետաքրքրութիւնը հայերուն հանդէպ կրնայ թուրքոյ հետ իրենց խզումին արձագանգը ըլլալ:

Ա. Տաքետեան - Այո, եւ ասիկա պէտք է լաւ օգտագործել, չարաշահելու գնով իսկ:

Յարցում - Անոնք որոնք պէտք է օգտագործեն այս պահը, պէտք է կարելոր պաշտօններու վրայ ըլլան, ինչպէս դուք:

Ա. Տաքետեան - Անշուշտ: Օրինակ կողքիս նստող դասախօսուիին՝ դոկտ. Ուաֆա Մահմուտ, որ Իրաքի հայերուն մասին խօսեցաւ, կը հրաւիրեմ ոչ թէ մէկ, այլ երկու զեկոյցով հանդէս գալու Հայկազեան Համալսարանի յաջորդ համագումարին: Անշուշտ երբ տեղացին, արաբը շնորհակալութիւն կը յայտնէ հայութեան, շատ ավելի լաւ է ...

Յարցում - Այստեղ նոր մարդոց ծանօթացք. կրնա՞յ ըլլալ որ ձեր յաջորդ համագումարներուն համար հրաւիրեք կարգ մը եգիպտացի դասախօսներ:

Ա. Տաքետեան - Անշուշտ, որովհետեւ մեր քաղաքականութիւնը տեղական ուժերը ներգրաւելն է: Երբ Լիբանանի հայութեան նուիրուած առաջին համագումարը ըրինք, տակաւին անփորձ էինք: Հիմա սակայն անպայման կ'ուզենք տեղացիներ հրաւիրել. օրինակ Իրաքի պարագային ունինք իրաքցի մտաւորականներ, որոնք պիտի հրաւիրուին անպայման, որովհետեւ երբ հայը կ'ըսէ թէ մենք տեղ ունինք Իրաքի պատմութեան մէջ, իրաքցին պէ՛տք է ընդունի այդ յայտարարութիւնը: Այս աշխատանքը նաեւ իրենց միջոցով պէտք է ընել:

Շնորհակալութիւն դոկտ. Ա. Տաքետեանին, իր գալիք ծրագիրներուն յաջողութեան մաղթանքներով:

Մ. Երամեան



ՀՄԸՄ ԿԱՄՔԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ **(26, 27, 28 Օգոստոս 2016)**

ՀՄԸՄ Կամքի մրցաշարքը սկսաւ Ուրբաթ 26 Օգոստոս 2016ին, Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ եւ հիւրընկալ ակումբին երեք տղոց խումբերուն միջ- կայացած մրցումով:

Մրցաշարքը կը վայելէր Գերշ. Տ. Աշոտ Ս. Եպս. Մնացականեանի հովանաւորութիւնը եւ Տէր եւ Տիկին Նուպար Լէյլէկեանի նախագահութիւնը:

Ներկայ էին Գահիրէի Հայոց հոգեւոր հովիւ Արժ. Տէր Յակոբ Յակոբեան եւ Աղեքսանդրիոյ Հայոց հոգեւոր հովիւ Արժ. Տէր Գրիգոր Մուրատեան:

Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ կը բացակայէին գլխաւոր երկու մարզիկներ, ուստի խումբը յուսահատ դիմադրութիւն ցուցաբերելէ ետք ՀՄԸՄ Կամքի մարզիկներուն համեստմակարդակով խաղարկութեան դէմ, պարտուեցաւ 29-45 արդիւնքով:

Շաբաթ 27 Օգոստոսին ՀՄԸՄ Արարատին եւ ՀՄԸՄ Կամքին միջեւ տեղի ունեցաւ առաջին մրցումը, որ մակարդակներու սաստիկ տարբերութեան պատճառով չկարողացաւ ներկաներուն հետաքրքրութիւնը գրաւել եւ ւարտեցաւ 61-48 արդիւնքով, ի նպաստ ՀՄԸՄ Արարատին:

Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ խաղաց Սրբուհի Թերեզայի խումբին դէմ, առիթ տալով իր պատանի ու երիտասարդ մարզիկներուն դաշտ իջնելու եւ իրենց հոյակապ խաղարկութիւնը դրսեւորելու: Մրցումը ւարտեցաւ ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ, 76-34 արդիւնքով:

ՀՄԸՄ Կամքի վարչութիւնը Garden Party-խրախճանք մը կազմակերպած էր, որուն համար Գահիրէէն հրաւիրուած էր երիտասարդ երգիչ Ռուբէն Սատ, երեկոն շէնցնելու: Ակումբի պարտեզին մէջ, քով քովի շարուած սեղաններուն շուրջ բոլորուեցան Գահիրէի ու Աղեքսանդրիոյ մարզիկներն ու երիտասարդները, նա- ակումբին անդամներն ու համակիրները:

Չարմանալի, միաժամանակ

գովելի է այն երեւոյթը որ Աղեքսանդրիոյ ակումբները կառչած կը մնան մրցաշարքերուն ընթացքին պարահանդես/խրախճանք կազմակերպելու ավանդութեան, մինչ Գահիրէի ակումբները տարիներէ ի վեր կը գոհանան մրցաշարքերուն երեք օրերուն ընթացքին ճոխ ու այլազան ուտելիքներ տրամադրելով մարզասեր հասարակութեան:

Կիրակի 28 Օգոստոսին տեղի ունեցաւ ավարտական մրցումը, Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ եւ ՀՄԸՄ Արարատին միջեւ: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ տղաքը սկիզբէն իսկ զօրաւոր խաղարկութեամբ կատարելապէս տիրապետեցին խաղին ու երկրորդ կիսախաղին արդիւնքը 45-25 էր, ի նպաստ իրենց: Մրցումը գրեթէ միակողմանի սկսած էր դառնալ: Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ տղաքը իրենք զիրենք գերազանցեցին ու խաղը ավարտեցաւ 82-55 արդիւնքով:

Յաղթական տղաքը ստացան բաժակը, որ նուիրուած էր Գաւուրճեան ընտանիքին կողմէ, ի յիշատակ Չոհրապ Գաւուրճեանին:

Վարձքը կատար Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ խումբին, մարզիչ Ամր Աշուրին, օգնական Ալաա Չահրանին, պատասխանատու Յակոբ Գարակէօզեանին եւ օգնական Զրիս Սիմոնեանին, իրենց տարած աշխատանքին համար, որուն շնորհիւ խումբը տիրացաւ 2016-ի պասքէթպոլի եգիպտահայ մրցաշարքերուն երկրորդ բաժակին:

Սօսի Ներենեան-Յակոբեան





ՀՄԸՄ ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ-ՔԸ **(23, 24, 25 Սեպտեմբեր 2016)**

Ուրբաթ 23 Սեպտեմբեր 2016-ին սկսաւ ԶՄԸՄ Արարատի պասքէթ-պոլի տարեկան մրցաշարքը, մասնակցութեամբ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ հայկական հինգ ակումբներուն: Այս եռօրեայ մրցաշարքը, որ նուիրուած էր Զայաստանի եւ Արցախի Զանրապետութիւններուն 25 ամեակներուն, կը վայելէր հովանաւորութիւնը Եգիպտոսի Զայոց Թեմի Քարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Ս. Եպս. Մաքականեանին, իր կողքին ունենալով, որպէս պատուոյ հիւր, Զայաստանի Զանրապետութեան Արտակարգ եւ Լիազօր դեսպան Դոկտ. Արմէն Մելքոնեանը: Մրցաշարքի նախագահն էր Տէր եւ Տիկին Պերճ Զալաճեանը:

Ուրբաթ օրուան առաջին մրցումը Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐՆէրուն միջ- էր: Զակառակ իրենց թափած ճիգերուն, Աղեքսանդրիոյ մարզիկները անկարող եղան տոկալ գահիրէցիներուն բարձր մակարդակին եւ կարողութեան, ու մրցումը ավարտեցաւ ի նպաստ Գահիրէի ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐՆի, 79-42 արդիւնքով:

ԶՄԸՄ Կամքին եւ հիւրընկալ ակումբին միջ- օրուան երկրորդ մրցումը, ուր զգալի էր մակարդակներու մեծ տարբերութիւնը, ավարտեցաւ ի նպաստ ԶՄԸՄ Արարատին, 65-35 արդիւնքով:

Շաբաթ 24 Սեպտեմբերի յայտագրին վրայ կային երեք մրցումներ: ԶՄԸՄ Արարատի 14 տարեկանէն վար տղաքը խաղացին տեղական խումբի մը դէմ, յաղթեցին ու տիրացան Տէր եւ Տիկին Ճորճ Չերտելեանի նուիրած բաժակին: Ակումբին 14 տարեկանէն վար աղջիկները խաղացին տեղական խումբի մը դէմ, յաղթեցին ու տիրացան Տէր եւ Տիկին Ճորճ Թորոսեանի նուիրած բաժակին:

Քանի որ Գահիրէի ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐՆը ունի 14 տարեկանէն վար թէ՛ տղոց, թէ՛ ալ աղջիկներու խումբեր, աւելի հետաքրքրական պիտի չըլլայի՞ նմրցումները, եթէ անոնք ալ հրաւիրուած ըլլային

Օրուան վերջին մրցումը Գահիրէի ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐՆին եւ Սրբուհի Թերեզայի խումբե-

րուն միջ- էր: Մրցումին սկիզբէն ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐՆի տղաքը աստիճանաբար առաւելութիւն արձանագրեցին ու պահեցին այդ գերազանցութիւնը մինչ- խաղին ավարտը: Մրցումը վերջացաւ 81-46 արդիւնքով, ի նպաստ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐՆին:

Կիրակի 25 Սեպտեմբերին տղոց ավարտական մրցումէն առաջ, Գահիրէի ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐՆի երեք աղջիկներու խումբը խաղաց հիւրընկալ ակումբին աղջիկներու խումբին դէմ: Քանի մը տարիէ ի վեր, Գահիրէի ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐՆի տղոց խումբին անհամեմատ գերազանցութեան պատճառով, տղոց ավարտական մրցումները դադրած են հետաքրքրական ըլլալէ: Այլեւս ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐՆի եւ ԶՄԸՄ Արարատի երեք աղջիկներուն մրցումն է որ կը գրաւէ մարզասերներուն ուշադրութիւնը, որոնք ժամը 8ին արդէն իսկ գրաւած էին բոլոր աթոռները:

Մրցումը սկսաւ զգոյշ ու լարուած: Մրցակից խուբերուն մարզիկներն ու մարզիչները իրարու կարողութիւններն ու խաղաձեւերը կ'ուսումնասիրէին: Զակառակ որ Գահիրէի ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐՆի աղջիկները Մարտ ամիսէն ի վեր զրկուած էին փորձ ընելու առիթէն, ակումբին պասքէթ-պոլի դաշտն ու հանդերձարանները հիմնովին վերանորոգման երնթարկուած ըլլալու պատճառով ու հազիւ չորս փորձ կարողացեր էին ընել ճակատագրական մրցումէն առաջ, սակայն խումբը որոշած էր յաղթել: Դժուարիւնը իրականացնելու ոգիով է որ խաղացին ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐՆի աղջիկները եւ մրցումին սկիզբէն, ի զարմանքիրենց համակիրներուն եւ ի յուսախաբութիւն մրցակից խումբին, տիրապետեցին խաղին : Երկրորդ կիսախաղի ավարտին արդիւնքը 21-16 էր, ի նպաստ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐՆին:

Խաղը տաք էր ու հետաքրքրական. քանի մը երկվայրկեանի ընթացքին խաղը դաշտին մէկ ծայրէն միւսը կը սուրար:

Մրցումը ավարտեցաւ ի նպաստ Գահիրէի ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐՆի աղջիկներուն, 47-37 արդիւնքով: Անոնք անհուն ուրախութեամբ բարձրացուցին Տէր եւ Տիկին Էտուար Սա-



յեանի նուիրած բաժակը:

Վարձքը կատար մարզիչ Ալաա Չահրանին, օգնական Մակետ Ահմատի, աւագ մարզիկուհի ու խումբին մղիչ ուժ Մարլօ Սիմոնեանին եւ պատասխանատու Սօսի Յակոբեանին, որոնց ճիգերուն շնորհիւ խումբը անգամ մը եւս տիրացաւ բաժակին:

Մրցաշարքին աւարտական մրցումը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ եւ ՀՄԸՄ Արարատի երեց տղոց խումբերուն միջ- եր, երբմինչեւ կիսախաղ արդիւնքի տարբերութիւնը շատ չըլլալուն՝ 35-28, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ, յաղթելու հեռապատկեր մը սկսած էր շողալ Արարատի համակիրներուն միտքերուն մէջ: Սակայն, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ լաւ մարզուած ու բարձրորակ խաղարկութե-

ամբ մարզիկները այդ կրկներեւոյթը ցրեցին եւ իրերայաջորդ գեղեցիկ ու ստոյգյարձակումներով, 83-51 արդիւնքով աւարտեցին մրցումը:

Յաղթական խումբը ստացաւ Տիար Պետրոս Մխտիկեանի նուիրած բաժակը, իսկ բոլոր մարզիկները ստացան մետալներ, նուիրուած Տէր եւ Տիկին Վարդ Ալեքսանեանի կողմէ:

Վարձքը կատար մարզիչ Ամէ Աշուրի, օգնական Ալաա Չահրանի, պատասխանատու Յակոբ Գարակեօգեանի եւ օգնական Քրիս Սիմոնեանի իրենց տարած աշխատանքին համար:

Սօսի Ներետեան-Յակոբեան



ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՊԱՍՔԷԹ-ՊՈԼԻ ՀԻՄՆՈՎԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ Գ-ԱՇՏԻՆ ԲԱՑՈՒՄՆ ՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ-ՔԸ (7, 8, 9 Հոկտեմբեր 2016)

Ուրբաթ, 7 Հոկտեմբեր 2016-ի երեկոյեան 7:30-ին Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ հիմնովին վերանորոգուած պասքէթ-պոլի դաշտին ու հանդերձարաններուն պաշտօնական բացումով սկսաւ ակումբին Եգիպտահայ պասքէթ-պոլի տարեկան մրցաշարքը, որ կը զուգահիշէր Եգիպտոսի Չիւնեալ Ուժերուն 6 Հոկտեմբերի յաղթանակի 43րդ տարեդարձին:

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ համակիրներն ու մարզիկները, մրցաշարքին մասնակցող մնացեալ չորս հայկական ակումբներուն ներկայացուցիչներն ու մարզիկները պասքէթ-պոլի դաշտին կից կը սպասէին Եգիպտոսի Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանին, որուն հովանաւորութիւնը կը վայելէր մրցաշարքը, որպէսզի կատարէր դաշտին բացումը:

Գերշ. Սրբազան Հայրը, իր կողքին ունենալով Եգիպտոսի Հայ Կաթողիկէ Համայնքին Վիճակաւոր Գերապայծառ Գրիգոր Օգոստինոս Գուսան, Հայաստանի Հանրապետութեան Արտակարգ – Լիազօր Դեսպան Դոկտ. Արմէն Մելքոնեանն ու Արժանապատիւ Հայր Յակոբ Յակոբեանը, կտրեց մուտքի ժապաւենը – յայտարարեց պասքէթ-պոլի դաշտը «բացուած»:

Ներկաները անմիջապէս գրաւեցին ակումբին նշանաւոր ամփիթատրոնին աստիճաններուն վրայ շարուած աթոռները: Գերշ. Սրբազան Հայրը կատարեց վերանորոգուած դաշտին օրհնութիւնը, որմէ ետք սկսաւ տողանցքը:

Երբ 1958-ին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԸ իր նոր կեդրոնը փխադրուեցաւ, ակումբին պասքէթ-պոլի դաշտը աւագածածկ էր, ինչպէս որ էին այդ ժամանակուան բոլոր դաշտերը: Մայիս 1984-ին, քանի մը ամիս աշխատանքէ ետք, դաշտը սալիկներով ծածկուեցաւ, ըստ այդ շրջանի նորաձեւութեան: Շարուած սալիկները ժամանակի ընթացքին մաշեցան, եղան սահուն ու անհաւասար: Դաշտը վերանորոգման կարիքունէր: Մարտ

2016-էն ի վեր սկսած աշխատանքները վերջապէ՛ս աւարտեցան Սեպտեմբերին, – ակումբը օժտուեցաւ «tartan»ով ծածկուած հիանալի դաշտով մը:

Հայկական խանդավառ երաժշտութեան հնչիւններու ընկերակցութեամբ մուտք գործեցին երեց աղջիկներու խմբապետ Նայիրի Յակոբեանն ու 18 տարեկանէն վար տղոց խմբապետ Արեգ Աբգարեանը, Հայկական – Եգիպտական դրօշակները վերամբարձ պահած: Անոնց յաջորդեց երեց տղոց խմբապետ Արմէն Վարժապետեանը, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ դրօշակը բարձր բռնած:

Ակումբին շնորհալի պարմանուհիներէն Լիա Նիկոլեանի, Տեսիլ Սիմոնեանի, Արին Սիմոնեանի, Անճելիսա Սիմոնեանի – Սելան Պալթայեանի առաջնորդութեամբ Եգիպտահայ հինգ ակումբներու մարզիկները կանոնաւոր կերպով իրենց տեղերը գրաւեցին դաշտին վրայ: Փոքրիկ տղոց – աղջիկներու զանազան խումբերու մարզիկներուն մուտքը ծափահարութիւններ խլեց բոլոր ներկաներէն:

Հնչեցին Եգիպտոսի – Հայաստանի քայլերգները, որոնցմէ ետք ակումբին սիրուած, ժրաշան ատենապետ Տիար Ժիրայր Տեփոյեան բարի գալուստ մաղթեց բոլորին, որոնք եկած էին ներկայ գտնուելու ակումբի գերազանցապէս արդիական պասքէթ-պոլի դաշտի բացումին: Ան շնորհակալութիւն յայտնեց Գահիրեի Ազգային Առաջնորդարանին, Նա- Գահիրեի ՀԲԸՄի վարչութեան եւ ՀԲԸՄի Եգիպտոսի Շրջանակային յանձնաժողովին, որոնց նիւթական անսակարկ օժանդակութեան շնորհիւ կարելի եղած էր իրականացնել այս ծաւալի հսկայ ծրագիր մը, որ պիտի ծառայէ բոլորին:

Ապա Պր. Ժիրայր Տեփոյեան նշեց որ ակումբին 10 տարեկանէն վար Ֆութպոլի տղոց խումբը, վերջերս մասնակցելով Հելինոպոլսոյ եկեղեցիներուն պատկանող մար-



զական ակումբներուն միջեկայացած մրցաշարքին, հանդիսացած է առաջինը ու տիրացած բաժակին, զոր կը նուիրեն իրենց ընկերոջ՝ վաղամեռիկ Անթընիի Նիկիլեանի յիշատակին: Յարգելի ատենապետը հրաւիրեց Տիկին Լալա Նիկիլեանը որ ստանայ իր զաւկին՝ Անթընիի ֆուլթայլի համազգեստը, ստորագրուած բոլոր փոքրիկներուն կողմէ: Լալան խոր յուզումով շնորհակալութիւն յայտնեց ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութեան, որ ամէն առիթի յիշելով իր ողբացեալ ամուսինն ու զաւակը, անոնց յիշատակը թարմ կը պահէ բոլորին սրտերուն մէջ:

Կրկին հնչեց Արա Գեորգեանի շուրջպարը ու մարզիկները հանդիսաւոր կերպով դուրս ելանդաշտէն: Այս յաջող տողանցքը արդիւնքն էր Պր. Ժիրայր Յակոբեանի ջանքերուն, որ կրցաւ կարճ ժամանակի ընթացքին գլուխ հանել զայն:

Օրուան առաջին մրցումը ՅԱԸՄ Կամքին – հիւրընկալ խումբերուն միջ– էր, որ սկսաւ ու շարունակուեցաւ խիստ միակողմանի: Կամքի աւագ մարզիկ Չաւէն Լէյլէկեան իր կարելին կ'ընէր խումբը կանգուն պահելու եւ նորեկ մարզիկներ միացնելով, մակարդակը բարելաւելու, սակայն անոնք տակաւին մեծ աշխատանքի կը կարօտին:

Մինչեւ երկրորդ քառորդախաղի աւարտը ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ կը խաղար գրեթէ իր բոլոր գլխաւոր մարզիկներով – արդիւնքը 60-22 էր, ի նպաստ իրենց: Տարբերութիւնը նուազեցնելու միտումով, խումբին մարզիչը խաղը բոլորովին վստահեցաւ պատանի մարզիկներուն, որոնք սակայն գերազանցելով երեցները, երեք թիւ արժող յարձակումներով – իրերայաջորդ յաջող յարձակումներով արդիւնքը հասցուցին աներեւակայելի թիւերու: Մրցումը աւարտեցաւ 111-47 արդիւնքով, ի նպաստ ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ:

Ժամանակը եկած էր մեծ ժողովրդակալութիւն վայելող վեթերաններու մրցումին: Գահիրէի ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ, ՅԱԸՄ Արարատի – Սրբուհի Թերեզայի վեթերաններէն կազմուած հաւաքականը խաղաց Petroleum Clubի վեթերաններուն դէմ: Տիկին Սեւան Տրդատեան, իր ուրոյն ու յստակ առողջանութեամբ, բարձրախօսը ձեռքին, սրամիտ նշումներով ներկայացուց մարզիկները եւ մրցումը սկսաւ: Բաւական

հետաքրքրական էր խաղը, որովհետեւ թէ՛ մակարդակները – թէ՛ ալ խաղարկութիւնը հաւասար էին ու բարձր: Գահիրէի ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ երեց տղոց խումբին մարզիչ Ամր Աշուր, խօսնակի դեր ստանձնելով, պատկերալից նկարագրութիւններով եւ զուարճալի ածականներով ներկաներուն ուշադրութիւնը գրաւեց մինչեւ մրցումին աւարտը: Հայ վեթերանները յաղթական հանդիսացան 95-90 արդիւնքով:

Շաբաթ 8 հոկտեմբերի յայտագրին վրայ կային երեք մրցումներ: Առաջինը ակումբին 18 տարեկանէն վար տղոց խումբին – Մատինաթ Նասր ակումբին միջեւ էր, որ շատ հետաքրքրական էր: ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ պատանիները, հետեւելով իրենց մարզիչ Զաքարէն Ալաա Չահրանի ցուցմունքներուն, լաւ խաղ մը հրամցուցին հանդիսատեսներուն եւ ինքնավստահ խաղարկութեամբ կարողացան Մատինաթ Նասրի հասակաւոր մարզիկները շփոթութեան մատնել: Մրցումը աւարտեցաւ 53-38 արդիւնքով, ի նպաստ ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց, որոնք ստացան Տէր – Տիկին Ալետիս Բէլլէեանի նուիրած բաժակը:

Վարձքը կատար խումբի մարզիչ Ալաա Չահրանին – պատասխանատու Ժիրայր Յակոբեանին, որոնց ճիգերուն շնորհիւ պատանիները կը մարզուին, միանալու համար երեցներու խումբին:

Չոյզ ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐԻներուն միջեւ մրցումը միակողմանի էր, մակարդակներու անհամեմատ տարբերութեան պատճառով: Փորձի պակասը զգալի էր Ադեքսանդրիոյ խումբին պարագային: Մրցումը աւարտեցաւ 69-32, ի նպաստ Գահիրէի ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ:

Օրուան վերջին մրցումը ՅԱԸՄ Արարատին – Սրբուհի Թերեզայի խումբերուն միջեւ էր: Երկու խումբերն ալ հաւասարապէս տկար խաղարկութիւն մը ցուցաբերեցին մարզասէրներուն ու առաջին քառորդախաղը աւարտեցաւ 16-15 արդիւնքով, ի նպաստ Արարատին: Երկրորդ քառորդախաղին եւս ուժերը գրեթէ հաւասար էին. ասիկա քաջալերեց Սրբուհի Թերեզայի մարզիկները իրականացնելու աներեւակայելին:

Սակայն երրորդ քառորդախաղէն սկսե-



ալ Արարատի տղաքը սթափեցան իրենց թմրութիւնէն, բարելաւեցին իրենց խաղը եւ 64-43 արդիւնքով յաղթական հանդիսացան:

Կիրակի 9 Յոկտեմբերի մրցումներուն առաջինը ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ կորիւններուն՝ 10 տարեկանէն վար խումբին – «Յելիոպոլիս Ակումբ»ի խումբին միջեւ էր: ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ փոքրիկները ինքնավստահ ու անվախ դաշտ իջան եւ ապացուցեցին որ իրենք եւս կարող էին ակումբին անունը բարձր պահել: Այս 12 փոքրիկներէ կազմուած խումբը իսկապէս ապագայ կը խոստանայ շնորհիւ պատասխանատու Արմէն Պալթայեանի – մարզիչ քաբթէն Մակետ Ահմատի ճիգերուն: Մրցումը ւարտեցաւ ի նպաստ հիւրընկալ ակումբին, 32-7 արդիւնքով: Յաղթական փոքրիկները ստացան բաժակը նուիրուած Տոքթ. – Տիկին Յրայր Տրդատեանի կողմէ:

Եգիպտահայ մրցաշարքերուն հետաքրքրաշարժ խաղը դարձած է Գահիրէ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ – ՅՄԸՄ Արարատի ոչ թէ երէց տղոց, այլ աղջիկներուն մրցումը: Մինչ ժամանակին աղջիկներու մրցումներուն հազիւ թէ ծնողները ներկայ կ'ըլլային, հիմա ակումբին ամփոփատրոնը լեցուն էր հանդիսատեսներով, որոնք չէին ուզած զրկուիլ այդ մրցումէն: Ուրախալի էր նկատել որ երկու խումբերն ալ բաղկացած էին 18 մարզիկուհիներէ, որոնք դաշտին մէջ հաճելի բազմութիւն մը ստեղծած էին, մրցումէն առաջ տաքնալու փորձեր ընելու ժամանակ:

Խաղին սկիզբի բաժինը միշտ դանդաղ կ'ըլլայ – զգոյշ, իւրաքանչիւր խումբ կ'ուսումնասիրէ միւսին կարողութիւնն ու խաղածելը, ըստ այդ ծրագրելու իր շարժումները: Երկրորդ – երրորդ քառորդախաղերուն ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները վստահութիւն շահելով, սկսան ցոյց տալ իրենց իսկական մակարդակը եւ թիւի տարբերութիւնը հասցուցին 20-ի:

Գնահատելի էր Արարատի աղջիկներուն պայքարելու ոգին, զոր պահեցին մինչեւ խաղին ւարտը: Երբ իրաւարարին վերջին սուլիչը հնչեց, արդիւնքը 65-48 էր, ի նպաստ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն, որոնք ստացան Տոքթ. – Տիկին Վիգէն Ծիգ-

մեճեանի նուիրած բաժակը:

Վարձքը կատար խումբին մարզիչ Զաբթէն Ալաա Չահրանի, օգնական Զաբթէն Մակետ Ահմատի, ւազ մարզիկուհի ու խումբին մղիչ ոյժ Մարլօ Սիմոնեանի – պատասխանատու Սօսի Յակոբեանի իրենց տարած աշխատանքին համար:

Նախքան ւարտական մրցումին սկսիլը, Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ փոխ-ատենապետ Պր. Յակոբ Գարակեօզեան խօսք առնելով ողջունեց ներկաները, ըսաւ որ պասքէթ-պոլի մրցաշարքը եգիպտահայ գաղութին սիրած ամենութիւններէն մէկը դարձած է, եւ վստահեցուց որ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքէթ-պոլի նոր եւ հոյակապ դաշտը բոլորին համար հպարտութեան առիթ է: Մաղթեց նաեւ որ մրցաշարքին ընդմէջէն Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ երիտասարդները մի՛շտ իրարու հանդիպելու առիթներ ունենան:

Աւարտական մրցումը, ինչպէս միշտ, ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ – ՅՄԸՄ Արարատի խումբերուն միջեւ էր: Հակառակ որ թե՛ թիւով, թե՛ ալ որակով ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը գերազանց էր Արարատէն, սակայն շփոթութիւնն ու արագութեան պատճառով եղած սխալները անբաժան էին խումբէն. առաջին քառորդախաղը ւարտեցաւ 21-20 խոնարհ արդիւնքով, ի նպաստ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ: Սակայն ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը հետզհետէ ձերբազատուելով ձախողութիւններէն, արդիւնքի առաւելութիւն արձանագրեցին, մրցումը ւարտեցին 84-67 արդիւնքով եւ տիրացան Տէր – Տիկին Օսնիկ Պըլըքտանեանի նուիրած բաժակին:

Վարձքը կատար խումբին մարզիչ Զաբթէն Ամր Աշուրի, օգնական Զաբթէն Ալաա Չահրանի, պատասխանատու Յակոբ Գարակեօզեանի եւ օգնական Քրիս Սիմոնեանի իրենց տարած աշխատանքին համար:

Մրցումներուն երէք օրերուն ընթացքին DJ Ռոպէռ Թաշճեան հայաշունչ մթնոլորտ ստեղծած էր իր հնչեցուցած ընտրեալ երգերով ու երաժշտութեամբ, իսկտիկին Սեւան Տրդատեան, հանդիսավարի դերստանձնելով, յաջող կերպով ներկայացուց մարզիկներն ու մարզիչները, բոլոր մրցումներէն առաջ: Մրցաշարքին բոլոր մետալները նուիրուած էին Տէր – Տիկին Վարդ



Ալեքսանեանի կողմէ:

Մրցումէն ետք ակումբին մարզիկներն ու համակիրները հրաւիրուեցան խորովածներով լի սեղաններու շուրջ յաղթանակները տօնելու:

Վարձքը կատար Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութեան, յաջող – փայլուն մրցաշարք մը կազմակերպելու համար:

Սօսի Ներշնչեան-Յակոբեան





ՄՐՔՈՒՀԻ ԹԵՐԵԶԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ (26, 27, 28 Հոկտեմբեր 2016)

Ուրբաթ 28 Հոկտեմբերին սկսաւ 2016-ի եգիպտահայ պասքեթ-պոլի վերջին մրցաշարքը, կազմակերպութեամբ Սրբուհի Թերեզա հայ կաթողիկէ ակումբին, հովանաւորութեամբ Եգիպտահայոց Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տէր Աշոտ Եպս. Մնացականեանի եւ Եգիպտոսի հայ կաթողիկէ համայնքին Վիճակաւոր՝ Գերապայծառ Գրիգոր Օգոստինոս Գուսանի: Մրցաշարքին կը նախագահէին Տէր եւ Տիկին Ժորժ Սարգիս ու մետայլները նուիրուած էին, ինչպէս միշտ, Տէր եւ Տիկին Վարդ Ալեքսանեանի կողմէ:

Օրուան ծրագրին մէջ կային երկու մրցումներ, որոնց առաջինը Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ եւ ՅՄԸՄ Կամքին միջ- էր: Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբէն, այդ օր, կը բացակայէին հինգ գլխաւոր մարզիկներ, պարագայ մը, որ առիթը ընծայեց պահեստի մարզիկներուն դաշտ իջնելու եւ խաղին մակարդակը անխախտ պահելու: Իսկապէս որ յաջող խաղարկութիւն մը ցուցաբերեցին ու յաղթական հանդիսացան, 83-46 արդիւնքով:

Երկրորդ մրցումը Աղեքսանդրիոյ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ եւ ՅՄԸՄ Արարատին միջեւ էր, եւ արդիւնքի տարբերութիւնը քիչ ըլլալուն, հետաքրքրական էր :Երկրորդ քառորդախաղի աւարտին արդիւնքը 36-29 էր, ի նպաստ ՅՄԸՄ Արարատին: Արդեօք հնարաւոր էր անակնկալի մը ականատես ըլլալ ... սակայն Արարատի տղաքը կարողացան իրեց արձանագրած առաւելութիւնը պահել եւ մրցումը աւարտեցաւ ի նպաստ իրենց, 64-52 արդիւնքով:

Շաբաթ 29 Հոկտեմբերի առաջին մրցումը մեծ ժողովրդականութիւն վայելող վեթերաններուն մրցումն էր: Այս անգամ վեթերաններու խումբէն կը բացակայէին ՅՄԸՄ Արարատի վեթերանները: Հիւրընկալ ակումբին ժրաջան ու սիրուած վարչական, երկարամեայ մարզիկ ու այժմ երեց տղոց խումբին պատասխանատու Գրիգոր Միքայէլեանը, բարձրախօսը ձեռքին, շատ անմիջական ու հաճելի ոճով յայտարարու-

թիւններ կ'ընէր ու կը ներկայացնէր մարզիկները, մրցաշարքի ամբողջ տեսողութեան:

Հայ վեթերանները այս անգամ եւս մրցեցան Petroleum Clubին դէմ ու խիստ հետաքրքրական խաղ մը հրամցուցին ներկաներուն: Հակառակ որ մրցակից խումբին գրեթէ բոլոր մարզիկները աւելի երիտասարդ էին քան հայ մարզիկները, սակայն անոնք տոկացին մինչեւ վերջ եւ մրցումը աւարտեցին ի նպաստ իրենց, 71-70 արդիւնքով:

Օրուան երկրորդ մրցումը ՅՄԸՄ Արարատին եւ հիւրընկալող խումբին միջեւ էր: Երկու կողմի մարզիկներուն ջիղերը պրկուած էին, մանաւանդ ՅՄԸՄ Արարատի խաղացողներունը, որոնք չոր խաղ մը կը ցուցաբերէին: Սրբուհի Թերեզայի տղաքը բաւական յաջող կերպով կը խաղային եւ կարծեք մեծ յոյսեր ունէին յաղթելու, մանաւանդ որ երկրորդ եւ երրորդ քառորդախաղերէն իւրաքաչիւրի աւարտին երկու թիւերու առաւելութիւն արձանագրած էին: Արդիւնքի քիչ տարբերութեան պատճառով դաշտը ելեքտրականացած էր ու մարզիկները պատրաստ էին բռնկելու որեւէ երկվայրկեանի: Նոյնիսկ քանի մը անգամ բախումներ պատահեցան, որոնք անմիջապէս կրնային կռիւի վերածուիլ, եթէ պատասխանատուներուն կողմէ արագ միջամտութիւն չըլլար: «Ճակատամարտը» աւարտեցաւ 60-52 արդիւնքով, ի նպաստ ՅՄԸՄ Արարատին:

Կիրակի օր եզրափակիչ մրցումը կար միայն, Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ՅՄԸՄ Արարատի միջեւ: Նկատի առնելով որ Սրբուհի Թերեզան երեց աղջիկներու խումբ չունի, մարզասեր հասարակութիւնը զրկուած էր աղջիկներու խումբերուն միջեւ հետաքրքրական մրցում մը վայելելէ:

Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը դաշտ իջան կազմակերպուած եւ ինքնավստահ ու տիրապետեցին խաղին, սկիզբէն մինչեւ վերջ: Հակառակ որ Արարատի տղաքը բնաւ չկորսնցուցին իրենց պայքարելու



ԱՆԴԱՄԱԿԱՆ

ԾՆՈՒՆԴ



Ուրախութեամբ կը տեղեկացնենք թե Գահիրեի ՀԲԸՄ-ի վարչութեան օժանդակ անդամուհիներէն Ռուպինա Ասլանեան-Նորարեւեան եւ ամուսինը Փիեռ, 26 Հոկտեմբեր 2016-ին բախտաւորուած են աղջիկ զաւակով մը, որ իրենց երկրորդն է եւ անուանած են Արել:

Այս առիթով «Տեղեկատու»ն իր ջերմ խնդակցութիւնները կը յայտնէ Նորածինին ծնողներուն, մեծ ծնողներուն՝ Տիկին Գլոսին Նորարեւեանին, Տէր եւ Տիկին Գալուստ Ասլանեաններուն, ինչպէս նաեւ մեծ մեծ մօր՝ Տիկին Անթուանէթ Պայտարեանին, եւ Նորածինին կը մաղթէ իր անունին նման փայլուն, առողջ եւ երկար կեանք մը:

ոգին, սակայն անհնար էր տոկալ բարձրորակ խումբին, որ շուտով ցոյց տուաւ զերազանցութիւնը: Երկրորդ քառորդախաղի ավարտին արդիւնքը 45-33 էր, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ, որուն մարզիկները որոշած էին տպաւորիչ եւ անմոռանալի արդիւնքով մը փակել 2016-ի մրցաշարքերը. ու երբ իրաւարարին սուլիչը մրցումին ավարտը յայտարարեց, արդիւնքը 100-59 էր, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻՆ: Յաղթական տղաքը ստացան բաժակը, որ նուիրուած էր Տէր եւ Տիկին Ռաֆֆի Միքայէլեանի կողմէ:

Վարձքը կատար խումբի մարզիչ Զարթեւ Ամր Աշուրի, օգնական Զարթեւ Ալաա Չահրանի, խումբին պատասխանատու Յակոբ Գարակեօզեանի եւ օգնական Զրիս Սիմոնեանի, իրենց տարած աշխատանքին համար, նա- Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչական անդամներուն, որոնք ճիգ չեն խնայեր պասքէթ պոլի բարձրորակ խումբեր պահելու համար:

Սօսի Ներետեան-Յակոբեան
Նոյեմբեր 2016



